

ՏԻԳՐԱՆ ՍԻՐՈՒՆՅԱՆ, ՏԱԹԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան

«ՍԱՀՄԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ». ԱՌԱՋԻՆ ՀՈՒՆԱԼԱՏԻՆԱՏԻՊ ՄԱՆՐ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ (ԺԷ. ԴԱՐ)¹

Բանալի բառեր՝ *Մանր քերականություն, ձեռագիր, հունալատինատիպ երկ, Սիմեոն Զուղայեցի, դասագիրք, հնչյունաբանություն, խոսքի մասեր, լատինատիպ շրջան:*

«Սահման քերականութեան» վերնագրով աշխատությունը բազմիցս ընդօրինակվել է, միայն Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում այն պահվում է 24 գրչագիր օրինակով թվագրված ժէ., ապա՝ ժԼ-ժԹ. դարերով. աշխատության հեղինակը հայտնի չէ:

Բնագրի ուսումնասիրության համար որպես հիմք ձեռագիր ընտրել ենք ամենավաղ օրինակը՝ ՄՄ 2018 (թթ. 420ա-430բ), որ գրվել է 1621 թ. երկու գրիչների ձեռքով Լվով, այնուհետև Ստամբուլ քաղաքներում: Քերականական նյութը ամբողջացնելու նպատակով ուսումնասիրել ենք նաև հետագա 23 ձեռագրերում եղած հավելումները: Նկատի առնելով որոշ տարբերություններ, հատկապես շաղկապների դասակարգման մեջ, ձեռագրերը պայմանականորեն բաժանել ենք երկու խմբի՝ բաղկացած 9 և 14 օրինակներից: Ա. խմբում շաղկապները տրված են 10, Բ.-ում՝ 10-ից ավելի տեսակով՝ 14 կամ 15, մասնակի տարբերություններ կան նաև այլ խոսքի մասերի նկարագրության մեջ²:

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՍՆ Գիտության կոմիտեի առամադրած ֆինանսավորմամբ՝ 18Տ-6Յ200 ծածկագրով գիտական թեմայի շրջանակում:

² Օր.՝ ա. անուն. Ա. խմբի ձեռագրերում կրկնաձևական ունի 9 ածանց, Բ. խմբի ձեռագրերում թվարկվում է 6 ածանց կն, բ. բայ. Ա. խմբի ձեռագրերում ըղձական եղանակի *յարածգական* ժամանակաձևը Բ. խմբում անվանված է *յարածգական* և *յարակայ*, իսկ ըղձական եղանակի հարակա և գերակատար ժամանակաձևը՝ *գերակատար* և *անորիշ* կն, գ. մակբայ. 8 տեսակներից վերջինը Ա. խմբի ձեռագրերում կոչվում է *անախտական*, Բ.-ում՝ *յոգնաստորոգական*՝ *պատշաճական* ենթատեսակով, որը բացակայում է նախորդում, ավելի մանրամասն տե՛ս հետագա շարադրանքում:

Ա. խմբի ձեռագրերում եզրերից մի քանիսն ունեն կրկնակ ձևեր, օր.³ ներգոյական հոլովը կոչվում է պարսառական կամ պարունական, անոթիչ ժամանակաձևը՝ նաև անսահմանական են. հիմք ընդունելով այս ներքին տարբերությունները, ինչպես նաև՝ բնագրի ամբողջականությունը և գրչության ճշգրտությունը՝ Ա. խմբից առանձնացրել ենք երեք ձեռագիր՝ ՄՄ 841, 2286, 2327, իսկ Բ. խմբից, որը հիմնականում միօրինակ է, նույն սկզբունքով՝ միայն ՄՄ 2295 ձեռագիրը. սրանք ուսումնասիրել ենք՝ իբրև լրացում հիմք ձեռագրի:

Երկու խմբերի ձեռագրերի գրչության տվյալները ի հայտ են բերում տեղի և ժամանակի ընդգրկուն պատկեր:

Ա. խմբի բոլոր ձեռագրերը ժողովածուներ են, ըստ գրչության հիշատակարանների՝ ՄՄ 1782-ը գրվել է Կոզոլով քաղաքում (Գրիմ) 1652-1654 թթ., ՄՄ 2286-ը՝ Էջմիածնում 1637 թ.: Մյուս ձեռագրերի գրչության ժամանակն ու տեղը հիշատակված չեն, ըստ արտաքին հատկանիշների՝ ՄՄ 2327-ը, 2363-ը, 8279-ը, 8464-ը թվագրվում են ժէ., ՄՄ 841, 2328-ը՝ ժԸ., ՄՄ 11248-ը՝ ժՊ. դարերով:

Բ. խմբի ձեռագրերը հիմնականում քերականական մեծ ու փոքր նյութեր պարունակող ժողովածուներ են. ըստ գրչության հիշատակարանների՝ ՄՄ 1686-ը գրվել է 1634 թ., ՄՄ 2292-ը՝ 1624 թ., ՄՄ 3193-ը շունի գրչության թվական, համարվում է ժէ. դարի, սակայն հայտնի է գրչության տեղը՝ Ավնդանց գյուղ: Ի տարբերություն սրանց, հետևյալ ձեռագրերի գրչության և՛ ժամանակը, և՛ տեղը հայտնի են. ՄՄ 2291-ը գրվել է Կեսարիայում, 1665 թ., ՄՄ 2295-ը՝ Գաղատիայում, 1683 թ., ՄՄ 2358-ը՝ Սպահանում (նոր Ջուղա), 1659-1662 թթ., ՄՄ 3504-ը՝ Կաֆայում, 1676-1692 թթ., ՄՄ 5911-ը՝ Սպահանում, 1661 թ.: Մյուս ձեռագրերը նախորդներին զիջում են գրչության տեղեկությունների ստուգությունամբ. ՄՄ 833-ը, 2293-ը, 2330-ը, 3657-ը թվագրվում են ժէ. դարով, իսկ ՄՄ 7121-ը և 9282-ը՝ ժԸ. դարով:

Ա. Քերականության տիպը, կառուցվածքը, ըմբռնումը: «Սահման քերականութեան»-ը հունալատինաստիպ երկ է³, քերականության ավանդական պատկերացումները, որոնց հիմքում Դիոնիսիոս Թրակացու քերականությունն է՝ ներառյալ արհեստական կազմությունները, լրացված են լատինաբան նորույթներով, որոնք հիմնականում հայերենին պարտադրված՝ ոչ օրինավոր ձևեր են: Քերականության առարկան կամ ըստ վերնագրի՝ սահման-ը, հստակորեն տարբերակված է, գլխավոր նյութը զուտ քերականական է, որը ներկայացված է տառ-

³ Քերականության տիպերի անվանումները տրված են ըստ Գ. Զահուկյանի, տե՛ս Գրաբարի քերականության պատմություն, Երևան, 1974, էջ 4:

ից բան աստիճանավորմամբ, այն է՝ հաջորդական՝ մեկը մյուսից սերող մակարդակներով⁴։ շարահյուսությամբ օժտված չէ։ Աշխատության վերջում՝ իբրև օժանդակ նյութ, «Խրատք ի քերականութիւնն» վերնագրի տակ տրված են կետադրական տեղեկություններ և մի քանի դիտողություն ուղղագրության վերաբերյալ։

Քերականությունը գրված է մատչելի լեզվով, զուրկ է երկարաշունչ նկարագրություններից, սահմանումները սեղմ են՝ էական դիտված մի քանի հատկանիշների հիմքով, փոխարենը մեծ տեղ է տրված օրինակներին՝ գործնական իմացությանը։ Այսինքն, այս աշխատությունն իր նպատակով առավելապես հակված է դեպի տեխնիկական քերականությունները, որոնք հենվում են լեզվի գործնական նկարագրության վրա, և չի հավակնում հին բնագրերի վերծանությունը, ինչպես նախորդ շրջանի բանասիրական քերականությունները։

Այս հատկանիշները վկայում են, որ «Սահման քերականութեան»-ը ծառայել է որպես ուսումնական ձեռնարկ, ընդ որում՝ դատելով գրչագրերի քանակից ու ժամանակագրությունից՝ տևական ժամանակ մոտ երկու դար, եղել է պահանջված դասագիրք։

Հեղինակը քերականությունը դիտարկում է սոսկ կիրառության մեջ՝ իբրև խոսքային հմտություն. «Քերականութիւն է արուեստ՝ որ յասելոյ և ի գրելոյ բաղկանայ» (ՄՄ 2018, 420ա)։ Հետագա հավելման մեջ լրացուցիչ բացատրված է՝ «գործնական, բնականաբար՝ ասական և գրական» (անդ)։ Այս սկզբունքը ձևակերպվել է հունալատինատիպ շրջանում և արտահայտվել հատկապես Սիմեոն Զուղայեցու քերականության մեջ, որը, նաև նկատի առնելով լեզվական մակարդակը, քերականության միավորները քննել է խոսքից դուրս և խոսքի մեջ՝ իբրև կիրառելի նյութ և կիրառութիւն⁵։

Բ. Հնչյունաբանական տեղեկություններ։ Վաղ քերականություններում հաճախ քննարկված գիր-տառ երկվությունը հեղինակը լուծում է՝ դրանք նույնացնելով. «Գիր է յօդաւոր ձայնի մասն նուաստ, և նոյնս տառ կոչի, զի ունի տարրումն իմն և դասութիւն» (անդ)։ Այս ըմբռնման հիմքում Թրակացու քերականության թարգմանչի (այսուհետ՝ Թարգմանիչ) սահմանումն է. «Նա և նոյնք իսկ տառք կոչին, վասն զի ունին տարրումն իմն և դասութիւն»⁶, ըստ Գ. Զահուկյանի՝ այդ նույնացմանը դիմել են նաև լատին, ապա լատինաբան քերականները,

⁴ Նույն սկզբունքով ֆերականությունն ուսումնասիրել են լատինատիպ շրջանի մյուս ֆերականները՝ Սիմեոն Զուղայեցին, Կղեմես Գալանոսը, Ոսկան Երևանցին ևն։ Հետագա համեմատություններն արված են հիմնականում Սիմեոն Զուղայեցու և Կղեմես Գալանոսի ֆերականությունների հետ՝ հաշվի առնելով դրանց և ֆննվող ֆերականության բովանդակային մերձավորությունը շարադրամբի ոչ հազվադեպ համընկնումները։

⁵ Սիմեոն Զուղայեցի, Գիրք որ կոչի քերականութիւն, Կ. Պոլիս, 1725, էջ 15-16։

⁶ Ն. Աղոնց, Երկեր, հ. Գ., «Արուեստ Գիտնիսեսայ ֆերականի», Երևան, 2008, էջ 4։

որոնք սկզբունքային նշանակություն չէին տալիս գրի և հնչյունի տարբերակմանը, քանի որ քերականության քննության մեկնակետ էին ընդունում գրավոր խոսքը⁷: Գրի սահմանումը գրեթե նույնաբար արտահայտված է Սիմեոն Զուղայեցու քերականության մեջ. «Գիր է, որով ձևանայ ձայն յօդաւոր, և նոյնս տառ կոչի, վասն զի ունի տարրումն իմն և դասութիւն»⁸, հատկապէս «մասն նուաստ» հատկանիշով աղերսվում է նաև լատինաբան այլ քերականների սահմանումներին՝ Կղեմես Գալանոս. «Իսկ գիր, որ և տառ ասի, է նախկին նիւթ և մասն նուաստագոյն քերականութեան, յորմէ վանգ բացադրի»⁹, Ոսկան Երեւանցի. «Գիր է յօդաւոր ձայնի մասն նուաստ»¹⁰ ևն:

Ձայնավորը և բաղաձայնը սահմանված են հունաբան քերականների հետևողությամբ՝ «ձայնաւորք ասին՝ զի ձայնս յինքեանց անպակաս ելուզանեն», «և բաղաձայն է, որ յինքեն է ոչ կարէ ելուզանել ձայնս, այլ ընդ ձայնաւորի շարակցելով, որգոն՝ հէ» (անդ):

Ձայնավորները ձեռագրերում նկարագրված են ոչ միակերպ, երբեմն դրանք պարզապէս տրված են շարքով առանց ներքին բաժանումների (անդ, ՄՄ 841, 120ա ևն), երբեմն առանձնացված են տեսակներ՝ ըստ Թարգմանչի. երկար-ը՝ է, օ, սուղ-ը՝ ե, ո, լ, երկամանակ-ը՝ ա, ը, ի, (ՄՄ 2327, 176ա ևն), իսկ մի քանի ձեռագրերում դրանց գումարվել է դերաձայն կոչված խումբը՝ հ, յ, վ. «Եւ ասին դերաձայնք, քանզի ուրէք առնուն ինչ գտեղի ձայնաւորաց, հիկէն՝ արուեստ, արհեստ» (ՄՄ 2286, 166բ, ՄՄ 2295, 25բ): Հետաքրքրական է, որ սրանք դիտվել են միայն ձայնավորի դեր կատարող հնչյուններ՝ շեղվելով ավանդական մեկնաբանությունից. ինչպէս հայտնի է՝ հ, յ, վ հնչյունները միջակ անվանումով առանձնացրել է Անանուն Մեկնիչը՝ դրանց միջին դիրք հատկացնելով ձայնավորների և բաղաձայնների միջև¹¹: Դերաձայն եզրը գործածել է նաև Կղեմես Գալանոսը. սակայն նա ճանաչում է մեկ դերաձայն (լատիներեն տարբերակում՝ *provocalis*) յ-ն, և հակադրվում եռյակ առանձնացնող քերականներին, ընդ որում՝ իր վերլուծությունը կառուցելով այն նույն օրինակների վրա, որ նշված են «Սահման քերականութեան» գործում. «Կարծեն ոմանք, թէ երեք տառք պարտին ասիլ դերաձայն, այսինքն՝ յ, հ, վ, բայց ոչ յիրաւի, քանզի Վեւ ամենկին է բաղաձայն, և ոչ երեք բնաւ ունի տեղի ձայնաւորի, և Հո առաւել շնչութեան զօրութիւն ունի, քան զդերաձայնին, և թէպէտ մտան է Հո երբեմն ի

⁷ Գ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 26-27:

⁸ Սիմեոն Զուղայեցի, էջ 16:

⁹ Կղեմես Գալանոս, Քերական և տրամաբանական ներածութիւն առ յիմաստասիրութիւնն շահելոյ, Հոռմ, 1645, էջ բ:

¹⁰ Ոսկան Երեւանցի, Քերականութեան գիրք. համաօտիւք ծայրաքաղ արարեալ յաղագս մանկանց և նորավարժից կրթութեան ի տառս մատենից և ի գիտութիւնս մասանց բանի ըստ քերթութեան արհեստի, Ամստերդամ, 1666, էջ 3:

¹¹ Ն. Աղանց, Երկեր, Բ. Գ., «Անանուն Մեկնիչ Բերականին», էջ 133:

մէջ բառին փոխանակ ձայնաւորացս ու, որպէս արուեստ և արհեստ, սակայն ոչ արտաբերի իբր թէ ու, այլ իբրև շնչութիւն ինչ»¹²: Այսինքն՝ այս դիտողություններից պետք է կարծել, որ Գալանոսը ծանոթ է եղել «Սահման քերականութեան»-ը, և որ կարևոր է նկատի է առել այն իր քերականությունը գրելիս:

Երկբարբառներն առանձին նկարագրված չեն, հիշատակվում են երկրորդաբար՝ իբրև կապակցություններ, որոնցում լ-ը արտահայտվում է լիաձայն. «Իսկ Իրենն ընդ Եչի, ընդ Ինոյ և ընդ Ոյի շարակցելով Ելուզանէ ձայնս, որգոն՝ աղբեր, անկիւն, տուն» (ՄՄ 2018, անդ), ավելի ուշ ձեռագրերում՝ «յարառոցմամբ բացակատարէ ձայնս» (ՄՄ 2295, 25ա ևն):

Բաղաձայնների տեսակներից նշված են թաւ-երը՝ փ, խ, ք, թ, ց, չ, լ, ու, միջակ-ները՝ բ, գ, դ, ձ, ղ, ճ, ժ, լեթկ-երը՝ պ, մ, կ, տ, զ, ս, ն, ծ, շ, ր, նայ-երը՝ դ, մ, ն, ր, և լծորդ բաղաձայնների ճ խումբ¹³ 1. փ, բ, պ, մ, 2. խ, ք, գ, կ, 3. թ, դ, տ, 4. ց, ձ, գ, ս, 5. լ, դ, ն, 6. շ, ճ, ծ, 7. չ, ժ, շ, 8. ու, ր (ՄՄ 2018, 420աբ): Սրանց թվարկումը մի կետով շեղվում է հունաբան ավանդույթից. Նիկողայոս Ադոնցը նշում է, որ Դիոնիսիոս Թրակացու քերականության հայերեն բնագրում նախապես զանազանվել է ճ լծորդություն ապա՝ 10, որոնցից երկու խումբ՝ 8-րդը՝ ր, ու, և 9-րդը՝ հ, հետագա հավելումներ են¹⁴: Մեր քննած քերականության մեջ բացակայում են վերջին երկու խմբերը՝ 9-րդը և 10-րդը: Լծորդություններն այս նույն ընտրությամբ ներկայացրել է նաև Սիմեոն Զուղայեցի¹⁵:

Վանկը սահմանված է ընդհանուր կերպով իբրև հնչուններից բաղկացած ինքնուրույն միավոր. «Վանգ է ձայն կատարեալ, բաղկացեալ ի տառից» (անդ, 420բ): Տեսակների նկարագրության մեջ վանկը փոխված է փաղառութիւն եզրով, ինչպես Թարգմանչի քերականության մեջ: Վանկի ավանդական բաժանումը համառոտված է. ըստ քանակային տարբերության՝ տրված են միայն երկար-ը և սուղ-ը. բնութեամբ երկարներն ունեն երկար ձայնավոր, ինչպես՝ «Մօսէս», դրութեամբ երկարները՝ երկամանակ, ինչպես՝ «աղախին», նույնը նաև սուղերի դեպքում. «Եւ սուղ փաղառութիւնքն ևս են, որք սուղ ձայնաւորօքն եղանին, հիկէն՝ Ենօք, և դրութեամբ երկամանական, որգոն՝ Բագրատ» (ՄՄ 2286, 167աբ): Ի դեպ, այս քերականության հնագույն ձեռագրում վանկի տեսակները հետագա

¹² Կղեմես Գալանոս, էջ ժա:

¹³ Լծորդությունը, որ Դիոնիսիոս Թրակացու քերականության մեջ բայի խոնարհման տիպ է, հեղինակը դիտել է որպես հնչյունաբանական կարգ և հանել բայի նկարագրությունից (տե՛ս ստորև). այս տեղաշարժը, ըստ երևույթին, բացատրվում է լծորդությունների դասակարգման հնչյունաբանական հիմքով. ինչպես հայտնի է՝ Թարգմանիչը, արհեստականորեն վերառադրելով այս կարգը, բայական հիմքերը խմբավորել է ըստ դրանց վերջնահանգ բաղաձայնների ֆիզիոլոգիական հատկանիշների:

¹⁴ Ն. Ադոնց, էջ LIII:

¹⁵ Սիմեոն Զուղայեցի, էջ 18:

հավելված են (ՄՄ 2018, անդ), իսկ որոշ ձեռագրերում, որոնք հավանաբար անմիջապես ընդօրինակվել են նախորդից և հետագայում չեն լրացվել, առհասարական բացակայում են (ՄՄ 841, 120ա ևն):

Գ. Խոսքի և նրա մասերի քննությունը: Բառի և բանի սահմանումների մեջ վերարտադրված են նախորդ քերականների տեղեկությունները՝ որոշակի ընտրությամբ: Բառը ներկայացված է իբրև ձևակազմական միավոր՝ ստորին և վերին մակարդակների հարաբերության մեջ, այսինքն՝ միայն հաշվի է առնված նրա բաղկացությունը վանկերից և բաղադրիչ լինելը նախադասության մեջ. «Բառ է ձայն բաղկացեալ ի վանգից և մասն բանի» (ՄՄ 2018, անդ): Այս սահմանման մեջ զուգորդված են մեկնիչների դիտողությունները. Հայտնի է, որ Անանուն Մեկնիչը բառը բնորոշում էր իբրև վանկերի պարզ միացություն, իսկ Դավիթը այն համարում էր բանի հիմք՝ ատաղձ, «որպէս նաւի զողնափայտն»¹⁶:

Բանը սահմանված է ըստ Թարգմանչի՝ դարձյալ որոշ կրճատմամբ. միտք արտահայտելու «ինքնակատար» եղանակը բաց է թողնված. «Բան է շարագրութիւն բառից կարգաւորաբար առ ի յայտնել զխորհուրդս» (անդ), կամ «բացայայտութիւն խորհրդոյ» (ՄՄ 2295, 26բ): Այս թերի սահմանումը կրկնում են նաև լատինատիպ ուղղության այլ քերականներ՝ Սիմեոն Զուղայեցին. «Բան է շարամանութիւն բառից, յայտնօղ տրամախորհութեան»¹⁷, Կղեմես Գալանոսը. «Արդ՝ բան է շարամանութիւն բառից առ ի զտրամախորհութիւնն յայտնելոյ»¹⁸: Գ. Զահուկյանը, մեկնաբանելով Գալանոսի սահմանումը, նկատում է, որ այդ հատկանիշի անտեսմամբ բանի ըմբռնումը դարձել է ավելի տարտամ, քանի որ այդպիսով ջնջվել է խոսքի և նախադասության սահմանը¹⁹:

Խոսքի մասերը ավանդական բաժանումով ճ-ն են՝ անուն, բայ, ընդունելութիւն, յաւոյ, դերանուն, նախադրութիւն, առբայ, շաղկապ: Մակբայի փոխարեն գործածված է առբայ (պատճենված լատ. adverbium-ից) եզրը, որ հանդիպում է նաև Ոսկան Երևանցու քերականության մեջ²⁰:

Անունը սահմանված է միայն ձևաբանական սկզբունքով՝ իբրև հոլովական, և բացասելով բային հատուկ հատկանիշները. «Անուն է մասն բանի հոլովական, թարց ամանակի և դիմաց» (ՄՄ 2018, անդ): Անվանը բառացիորեն նույն բնորոշումն է տվել Սիմեոն Զուղայեցին²¹, իսկ Կղեմես Գալանոսն այն զուգորդել է ավանդական ըմբռնմանը²²:

¹⁶ Ն. Աղոնց, «Մեկնութիւն Դաթի փիլիսոփայի», էջ 101, «Անանուն Մեկնիչ ֆերականին», էջ 137:

¹⁷ Սիմեոն Զուղայեցի, էջ 24:

¹⁸ Կղեմես Գալանոս, էջ 107:

¹⁹ Գ. Զահուկյան, էջ 29:

²⁰ Ոսկան Երևանցի, էջ 28 ևն:

²¹ Սիմեոն Զուղայեցի, էջ 25:

²² Կղեմես Գալանոս, էջ 107:

Թարգմանչի սահմանման որոշ հատկանիշներ (թանձրացական և վերացական իրեր նշելը, դրանք «հասարակաբար» և «յատկապէս» անվանելը) դիտարկված են առանձին՝ քերականական կարգերի մեջ, ըստ այդմ՝ թվարկվում է 7 քերականական կարգ՝ 5-ի փոխարեն. էակ, քանակ, որոնք բացակայում են Թարգմանչի քերականության մեջ, սեռ, տեսակ, ձև, թիւ, հոլով:

էակը լինում է զգալի և իմանալի. «զգալի, որզան՝ քար, և իմանալի, որպակ՝ խրատ» (անդ), քանակը՝ հասարակ և յատուկ. «հասարակ, որզոն՝ մարդ, և յատուկ, որպակ՝ Պետրոս» (անդ):

Սեռերի մեջ թողնված է երեք տեսակ, որոնք տարբերվում են հիմնականում իմաստային հիմունքով՝ ըստ բնական սեռի. արական՝ «ուստր», իգական՝ «դուստր», շեզոմ՝ «զաւակ» (անդ, 420բ-421ա): Կոչական հոլովի նկարագրության մեջ տրվում են նաև արական և իգական սեռերի տարբերակիչ մասնիկներ. «արական՝ ծօ Պետրոս, իգական՝ քա Մարիամ» (անդ, 422ա): Այս նույն սեռանիշները կոչականին հատկացրել է նաև Սիմեոն Զուղայեցին²³:

Ձևի և տեսակի ներքո, ինչպես նախորդ քերականություններում, պարզաբանվում է անվան կազմությունը: Ձևը լինում է պարզ՝ «բարի», բարդ՝ «բարեպաշտ», յարաբարդ՝ «բարեպաշտասէր», տեսակը՝ նախագաղափար՝ «երկիր», և ածանցական՝ «երկրային» (անդ, 421աբ):

Թարգմանչից ավանդված ածանցական անունների շարքը փոփոխվել և լրացվել է. նախկին 7 տեսակի փոխարեն թվարկվում է 10-ը. բաղդատական (-գոյն, -գին. «արիագոյն, սաստկագին»), գերադրական (-եղ, -լի. «անձնեղ, սքանչելի»), փաղաճական (-ակ, -իկ, -ուկ. «այրիկ, քարուկ, որդեակ»), ստացական (-ական, -ունի, -եան. «քահանայական, արքունի, դավթեան»), սերական (-ցի, -ունի, -ենի, -ուհի. «տարսոնացի, Արշակունի, նունենի, վարդենի, Վարդուհի»), գոյական (-ային, -եայ, -ի, -ցու, -եղեն. «երկնային, քարեայ, պղնձի, մահկանացու, մարմնեղէն»), պարունական (-աստան, -արան, -ուտ, -ոց. «Հայաստան, կուսարան, քարուտ, փայտնոց»), կրկնաձական (-օղ, -իչ, -ումն, -ւոր, -ուն, -որդ, -կից, -ուլիւն, -ունի. «մաքրօղ, փրկիչ, մաքրումն, փառաւոր, իմաստուն, առաջնորդ, ընկերակից, սրբութիւն, տէրունի»), երբեմն նաև՝ 6 ածանցով²⁴, պակասական (-ատ. «ձեռնատ»), մակրդական (-ոտ. «ցաւոտ») (անդ, 421աբ): Կրկնաձանց անունները հավելյալ մեկնաբանված են. «Եւ կրկնաձականք ասին, զի ածանցեալքս կարեն ևս ածանցիլ, որպակ՝ մաքրողական, փրկչական, ուսումնական, փառաւորական, իմաստնական, առաջնորդական, ընկերակցական, սրբութեանական, տէրունական» (անդ): Կղեմես Գալանոսը սրանց չի անդրադառնում ածանցավոր անունների դասակարգման մեջ, սակայն տալիս է համանման մեկնաբանություն և օրինակներ. «Արդ՝ յաձանցեալ

²³ Սիմեոն Զուղայեցի, էջ 57-58:

²⁴ ՄՄ 2295, 28ա:

յանուանցս՝ մետասանն գտանին կրկնածանք, այսինքն, որք ածանցեալք՝ կրկին կարեն ածանցիլ, և սոքա են՝ որք միանգամ աւարտին՝ իւր, որդ, կից, ութին, ուն, ունի, իչ, օղ, ումն, ոտ, ական»²⁵:

Անվան երկու թիվ է նշվում՝ եզական և յոգնական՝ «Պետրոս, Պետրոսք» (անդ, 421բ), հոգնակիի արտահայտման այլ ձևեր պարզաբանվում են հոլովանիշների նկարագրության մեջ:

Ինչպես ժամանակի մյուս քերականություններում՝ այստեղ ևս հայերենին վերագրվում է 10 հոլով.

ուղական («կենդանի»),

սեռական («կենդանւոյ»),

տօրական («ի կենդանի»),

կրական²⁶ /պարունական²⁷ /պարառական²⁸ («ի կենդանումն»),

գործիական («կենդանեալ»),

հայցական («զկենդանի»),

սկզբնական («ի կենդանւոյ»),

պատմական («զկենդանւոյ»),

բակառական («զկենդանեալ»),

կոչական («ով կենդանի») (անդ):

Այս անվանումներից մի քանիսն ինքնուրույն են, ներգոյականի իմաստով ձեռագրերում հանդիպում են կրական, պարունական, պարառական եզրերը: Զ նախդրի կիրառությունը գործիականի հետ անվանված է բակառական: Բացառականի իմաստով գործածված է սկզբնական եզրը՝ ինչպես Սիմեոն Զուղայեցու հոլովման հարացույցում²⁹:

Հոլովանիշ են համարված նաև նախդիրները, ըստ այդմ՝ հոլով կազմող մասնիկների նախահար կամ վերջնահար դրույթյամբ առանձնացված է Յ խումբ. «Արդ, սեռականին և գործիականին հոլովն ի յանգումն լինի: Տրականին, հայցականին և կոչականին՝ ի սկիզբն: Իսկ կրականին, սկզբնականին, պատմականին և բակառականին՝ ի սկիզբն և ի վերջն» (անդ): Հոլովանիշների դիրքային նկարագիրը ավելի մանրամասն տալիս է Կղեմես Գալանոսը³⁰:

Հոլովման տիպերը առանձին քննության առարկա չեն դարձել, դրանք՝ իբրև սեռականի վերջավորություններ, ներկայացվում են հոլովանիշների ընդհանուր շարադրանքում.

²⁵ Կղեմես Գալանոս, էջ իբ:

²⁶ ՄՄ 2018, 421բ:

²⁷ ՄՄ 2327, 178ա:

²⁸ ՄՄ 2286, 169ա:

²⁹ Սիմեոն Զուղայեցի, էջ 31 կն:

³⁰ Կղեմես Գալանոս, էջ լա:

«Սեռականացն գաղափարք են ժ.՝ այ, ոյ, ի, ու, ոջ, ոյր, եայ, և Գ. նայքն՝ դ, ն, ր, հիբար. Ադամայ, նիւթոյ, ծառայի, Աբրահամու, կնոջ, սեռոյր, էսայեայ, Նունեայ, աստեղ, անձին, ծաղեր: Բայց նայիւքս բազում կերպիւ հոլովի, որգան. այր՝ առն, քոյր՝ քեռն, տէր՝ տեառն, հայր՝ հօր, օր՝ աւուր, տիւ՝ տուրնջեան, աղբեր՝ աղբեր, տուն՝ տան, մրջիւն՝ մրջեան, քանգի ամենայն իւն լինի եան:

Եւ տրականինն Ինիւ և Յիով լինի, որգան՝ ի տուն, յերկիր:

Եւ կրականին նախադասք են Գ.՝ ի, յ, ն, իսկ վերջն կամ ըստ սեռականին լինի՝ ոջ, կամ ում, հիկէն՝ ի տան, յերկրի, յոգոջ, նենթակայում:

Եւ գործիականին գաղափարք են Ե.՝ աւ, ով, իւ, ու, բենն, որպիսի՝ ոսկեաւ, արծաթով, խաչիւ, նախանձու, ջուրբ:

Եւ հայցականն նախադաս Զայիւ եղանի, որգոն՝ Զսէր:

Եւ սկզբնականին՝ ի սկիզբն Ին և Յի լինի, իսկ վերջն ըստ սեռականին, որգան՝ ի նիւթոյ, յԱդամայ, բայց յորժամ ինով և նայիւքն իցէ հոլովեալ, յայնժամ յէ հանգի, հիբար՝ ի ծառայէ, յաստեղէ, յանձնէ, ի ծաղերէ:

Եւ պատմականին՝ ի սկիզբն Զայ դնի, իսկ վերջն որպէս սկզբնականին է:

Եւ բակառականին ի սկիզբն Զայ դնի, իսկ վերջն որպէս գործիականին է³¹:

Եւ կոչականին գաղափարք են Զ.՝ ո, ով, է, այ, ծո, քա, որբար՝ ո մարդ, ով որդեակ, է այր, այ հեծեալ, արական՝ ծօ Պետրոս, իգական՝ քա Մարիամ» (անդ, 422ա):

Այս դասակարգման մեջ նկատելի են որոշ թերութիւններ ու անճշտութիւններ՝ ա. կանոնավոր և անկանոն հոլովումները տարանջատված չեն, հոլովիչներ ի հիմնական շարքում նշված է -ոջ-ը, իսկ տարահոլովութիւնը վերագրված է միայն նայերով վերջավորվող անուններին, բ. արմատական հնչյունը կցվել է վերջավորութեանը, և արդյունքում ի հայտ է բերվել նոր հոլովիչ՝ -եայ, գ. հոլովական վերջավորութիւն է առանձնացված արտաստվոր հոլովաձևից՝ «սեռոյր»³² (մի քանի ձեռագրերում -ոյր-ը հանված է հոլովիչների շարքից³³), դ. տրականը ձևավորված է միայն նախորդով, ե. օրինաչափորեն կիրառված է արհեստական և նախդիրը:

Հոգնակիի համար հատկացվում է երեք վերջավորութիւն՝ ս, ց, ք, հետևյալ բաշխմամբ. «ուղղականն, գործիականն, բակառականն և կոչականն Քիւ լինին, որբար՝ կենդանիք, կենդանեօք, զկենդանեօք, ով կենդանիք: Իսկ սեռականն,

³¹ Բակառականի կազմության վերաբերյալ այս տեղեկությունը որոշ ձեռագրերում բացակայում է ՄՄ 841, 122ա կն:

³² Գոյականների, դերբայների եզակի սեռականին -ր վերջավորություն կցվել է հունարան դպրոցի քարգմանություններում, որը ըստ երևույթին՝ փոխառված է դերանվանական հոլովման սեռական ձևերից՝ այսօր, սորա կն. տե՛ս Գ. Մուրադյան, Հունաբանությունները դասական հայերենում, Երևան, 2010, էջ 106-107:

³³ ՄՄ 2295, 28բ կն:

սկզբնականն և պատմականն Յոյիւ, որզան՝ կենդանեաց, ի կենդանեաց, զկենդանեաց: Իսկ տրականն, կրականն և հայցականն Սէիւ, հիկէն՝ ի կենդանիս, ընկենդանիս, զկենդանիս: Եւ կրականն ի տրականէն ըն յոգնականսն նախադաս նուրին միայն որոշի» (անդ, 422բ):

Եթե Թարգմանիչը և մեկնիչները բայը հակադրում էին անվանը՝ իբրև «բառ անհոլով», այս քերականության մեջ այն ներկայացված է ինքնին՝ իբրև խոնարհական բառ, որն օժտված է միայն խոնարհման կարգերով. «Բայ է բառ հոլովական ընդունական ամանակի և դիմաց, որպէս՝ սիրեմ» (անդ, 422բ): Բայի այս ընկալումը ձևակերպել է լատինաբան հայերենի դեռևս սկզբնավորման շրջանում՝ Հովհաննես Քոնեցիին (ԺԴ. դ.)³⁴, ապա այն ընդհանրացել և կայունացել է հետագա լատինատիպ քերականություններում:

Բայի քերականական կարգերը 7-ն են, լծորդությունն, ինչպես նշվեց, դուրս է թողնվել: Այս մի բացառությամբ բայի կառուցվածքն ամբողջովին պահպանել է իր նախկին անվանումներն ու բաժանումները.

Հոլովումն (այսինքն՝ եղանակներ). սահմանական («սիրեմ»), աներևոյթ («սիրել»), հրամայական («սիրեա՛»), ըղձական («սիրէի»), ստորադասական («եթէ սիրիցեմ»),

Տրամադրութիւն (այսինքն՝ սեռեր). ներգործութիւն («սիրեմ»), կիր («սիրիմ»), միջին³⁵ («ունիմ, մոռանամ, խորհիմ»),

Տեսակֆ. նախագաղափար («սիրեմ»), ածանցական («սիրեցուցանեմ»),

Ձևւ (բառակազմական բնութագիր). պարզ («ասեմ»), բարդ («ստորասեմ»), յարաբարդ («հակաստորոգեմ»),

Թիւ. եզական («սիրեմ»), յոգնական («սիրեմք»):

Դէմֆ. «նախ՝ յորմէ բանն» («սիրեմ»), «երկրորդ՝ առ որ բանն» («սիրես»), «երրորդ՝ յաղագս որոյ բանն» («սիրէ»):

Ամանակֆ. ներկա («սիրեմ»), անցեալ, որ բաժանվում է 4 տեսակի՝ յարածգական («սիրէի»), յարակալ («սիրեցի»), գերակատար («սիրեալեմ»), անորիշ («սիրեալէի»), և ապառնի («սիրեցից») (անդ 422բ-423ա):

Եմ բային երկու կիրառություն է հատկացվում՝ առանձին և բաղադրության մեջ, և ըստ այդմ տարբերակվում են էական և տրամադրական տեսակները. «էականք ասին այնք, որք զէութիւն իրին ցուցանեն, որգոն՝ ես եմ, դու ես, նա է, ես էի, դու էիր, նա էր, ես եղէց, դու եղիցիս, նա եղիցի: Եւ տրամադրականք

³⁴ **Յովհաննէս Քոնեցի**, Յաղագս քերականին, ներածությունը Լ. Խաչիկյանի և Ս. Ավագյանի, Երևան, 1977, էջ 176: Քոնեցու այս սահմանման տարբերեցման մասին տե՛ս **Ս. Սիրունյան**, «Հովհաննէս Քոնեցու ֆերականական երկի սահմանումների նախօրինակները», *ԲՄ* № 23, 2018, էջ 122-140:

³⁵ Միջին տրամադրութիւն հասկացությունը գալիս է Թարգմանչից (Ն. Աղոնց, *Երկեր*, հ. Գ., էջ 22), որ արհեստականորեն հայերենին է վերագրել հունարենի բային հատուկ այդ երրորդ սեռը (որը պետք չէ շփոթել չեզոք սեռի հետ):

են, որք զիրակութիւն էին ցուցանեն, և ոչ զէն, որգոն՝ սիրեմ, սիրես, սիրէ» (անդ, 423ա): Այս բաժանումը ճանաչել է նաև Միմեոն Զուղայեցին՝ գործածելով էական և արտակայական եզրերը³⁶, այնուհետև՝ Մխիթար Սեբաստացին՝ երկրորդ խումբը անվանելով աոքական³⁷:

Բայական կարգերի առերևույթ հունաբանությունները գործածության մեջ ի հայտ են բերում լատինաբանության հատկանիշներ: Դրանք արտացոլվել են խոնարհման հարացույցում՝ «Հոլովմունք բայից կարգաւ ըստ երից դիմաց և ըստ երկուց թուոց» վերնագրի ներքո: Քանի որ լծորդություններն ի սկզբանե անտեսվել էին, խոնարհումը տրված է միատիպ՝ «սիրեմ» բայի օրինակով.

«Սահմանական, ներգործական, ներկայ, եզական՝ սիրեմ, սիրես, սիրէ: Բազմաւորական՝ սիրեմք, սիրէք, սիրեն:

Յարաձգականին եզական՝ սիրէի, սիրէիր, սիրէր: Բազմաւորական՝ սիրէաք, սիրէիք, սիրէին:

Յարակայի եզական՝ սիրեցի, սիրեցեր, սիրեաց: Բազմաւորական՝ սիրեցաք, սիրեցիք, սիրեցին:

Գերակատարի եզական՝ սիրեալեմ, սիրեալես, սիրեալէ: Բազմաւորական՝ սիրեալեմք, սիրեալէք, սիրեալեն:

Անորիշի (նաև՝ անսահմանական³⁸) եզական՝ սիրեալէի, սիրեալէիր, սիրեալէր: Բազմաւորական՝ սիրեալէաք, սիրեալէիք, սիրեալէին:

Ապառնոյ եզական՝ սիրեցից, սիրեսցես, սիրեսցէ: Բազմաւորական՝ սիրեսցուք, սիրեսցիք (նաև՝ սիրեսցէք³⁹), սիրեսցեն:

Սահմանական կրաւորական ներկայ ամանակի եզական՝ սիրիմ, սիրիս, սիրի: Բազմաւորական՝ սիրիմք, սիրիք, սիրին:

Յարաձգականի եզական՝ սիրեի, սիրեիր, սիրիր: Բազմաւորական սիրեաք, սիրեիք, սիրեին:

Յարակայի եզական՝ սիրեցայ, սիրեցար, սիրեցաւ: Բազմաւորական՝ սիրիցաք, սիրիցայք, սիրիցան (նաև՝ սիրեցայք, սիրեցան⁴⁰):

Գերակատարի եզական՝ սիրեցեալեմ, սիրեցեալես, սիրեցեալէ: Բազմաւորական՝ սիրեցեալեմք, սիրեցեալէք, սիրեցեալեն:

Անորիշի եզական՝ սիրեցեալէի, սիրեցեալէիր, սիրեցեալէր: Բազմաւորական՝ սիրեցեալէաք, սիրեցեալէիք, սիրեցեալէին:

³⁶ Սիմեոն Զուղայեցի, էջ 63:

³⁷ Մխիթար Սեբաստացի, Քերականութիւն գրաբարի լեզուի հայկազան սեռի, Վենետիկ, 1730, էջ 303:

³⁸ ՄՄ 2327, 180ա:

³⁹ ՄՄ 841, 123բ:

⁴⁰ Նույն տեղում:

Ապառնոյ եզական՝ սիրեցայց, սիրեսցիս, սիրեսցի: Բազմաւորական՝ սիրեսցուք, սիրիցիք, սիրիցին (նաև՝ սիրիսցիք, սիրիսցին⁴¹):

Աներևոյթին ներգործական ներկայ՝ սիրել: Անցեալ՝ էսիրել: Ապառնի՝ սիրելոյ:

Կրաւորական ներկայ՝ սիրիլ: Անցեալ՝ էսիրիլ: Ապառնի՝ սիրիլոյ:

Հրամայական, ներգործական և ներկայական եզական՝ սիրեա՛, մի՛ սիրեր, սիրեսցէ՛, մի՛ սիրեսցէ: Բազմաւորական՝ սիրեցէ՛ք, մի՛ սիրէք, սիրեսցե՛ն, մի՛ սիրեսցեն:

Ապառնոյ եզական՝ սիրեսջի՛ր, մի՛ սիրեսցես, սիրեսցէ՛, մի՛ սիրեսցէ: Բազմաւորական՝ սիրեսջի՛ք, մի՛ սիրեսջիք, սիրեսցե՛ն, մի՛ սիրեսցեն:

Կրաւորական ներկայականի եզական՝ սիրի՛ր, մի՛ սիրիր, սիրեսցի՛, մի՛ սիրեսցի: Բազմաւորական՝ սիրի՛ք, մի՛ սիրիք, սիրեսցի՛ն, մի՛ սիրեսցին:

Ապառնոյ եզական՝ սիրիցի՛ս, մի՛ սիրիցիս (սիրիջի՛ր, մի՛ սիրիջիր⁴²), սիրեսցի՛, մի՛ սիրեսցի: Բազմաւորական՝ սիրեցարո՛ւք, մի՛ սիրիցէք (մի՛ սիրիջիք, մի՛ սիրիցիք⁴³), սիրեսցի՛ն, մի՛ սիրեսցին:

Զանցեալ ամանակն և առաջին դէմն ոչ ունի, զի հրամայական է:

Ըղծական ներգործական ներկայական ամանակի եզական՝ մարտան սիրէի, սիրէիր, սիրէր: Բազմաւորական՝ մարտան սիրէաք, սիրէիք, սիրէին:

Յարաձգականի (յարաձգականի և յարակայի⁴⁴) եզական՝ մարտան սիրեալ լինէի, լինէիր, լինէր: Բազմաւորական՝ մարտան սիրեալ լինէաք, լինէիք, լինէին:

Յարակայի և գերակատարի (գերակատարի և անորիշի⁴⁵) եզական՝ մարտան սիրեալէի, սիրեալէիր, սիրեալէր: Բազմաւորական՝ մարտան սիրեալէաք, սիրեալէիք, սիրեալէին:

Անորիշի և ապառնոյ եզական՝ մարտան սիրիցեմ, իցես, իցէ: Բազմաւորական՝ մարտան սիրիցեմք, սիրիցէք, սիրիցեն:

Ըղծական կրաւորական ներկայ ամանակի եզական՝ մարտան սիրեի, սիրեիր, սիրիւր: Բազմաւորական՝ սիրեաք, եիք, եին:

Յարաձգականի (յարաձգականի և յարակայի⁴⁶) եզական՝ մարտան սիրեցեալ լինէի, լինէիր, լինէր: Բազմաւորական՝ մարտան սիրեցեալ լինէաք, լինէիք, լինէին:

41 Նոյն տեղում:

42 ՄՄ 2295, 33ա:

43 Նոյն տեղում:

44 ՄՄ 2295, 33բ:

45 Նոյն տեղում:

46 Նոյն տեղում:

Յարակայի և գերակատարի (գերակատարի և անորիշի⁴⁷) եզական՝ մարտան սիրեցեալիցեմ, իցես, իցէ: Բազմաւորական՝ սիրեցեալից եմք, իցէք, իցեն (մարտան սիրեցեալէի, էիր, էր, սիրեցեալէաք, էիք, էին⁴⁸):

Անորիշի և ապառնոյ եզական՝ մարտան սիրիցիմ, սիրիցիս, սիրիցի: Բազմաւորական՝ մարտան սիրիցիմք, սիրիցիք, սիրիցին:

Ըղձականիս ներկայական միայն իւրն է, զի ոչ գոյ չորս խոնարհմանցն այսպիսի խոնարհումն, իսկ այլքն ստորադասականին ևս լինին:

Ստորադասական գործաւորական ներկայ ամանակի եզական՝ եթէ սիրիցեմ, իցես, իցէ: Բազմաւորական՝ եթէ սիրիցեմք, իցէք, իցեն:

Յարաձգականի եզական՝ եթէ սիրեալ լինէի, լինէիր, լինէր: Բազմաւորական՝ եթէ սիրեալ լինէաք, լինէիք, լինէին:

Յարակայի եզական՝ եթէ սիրեալիցեմ, իցես, իցէ: Բազմաւորական՝ սիրեալիցեմք, իցէք, իցեն:

Գերակատարի եզական՝ եթէ սիրեալէի, էիր, էր: Բազմաւորական՝ եթէ սիրեալէաք, էիք, էին:

Անորոշի եզական՝ յորժամ սիրեալ լինիմ, լինիս, լինի: Բազմաւորական՝ յորժամ սիրեալ լինիմք, լինիք, լինին:

Ապառնոյ եզական՝ եթէ սիրիցեմ, իցես, իցէ: Բազմաւորական՝ եթէ սիրիցեմք, իցէք, իցեն:

Ստորադասական կրաւորական ներկայ ամանակի եզական՝ եթէ սիրիցիմ, իցիս, իցի: Բազմաւորական՝ եթէ սիրիցիմք, իցիք, իցին:

Յարաձգականի եզական՝ եթէ սիրեցեալ լինէի, լինէիր, լինէր: Բազմաւորական՝ եթէ սիրեցեալ լինէաք, լինէիք, լինէին:

Յարակայի եզական՝ եթէ սիրեցեալիցեմ իցես, իցէ: Բազմաւորական՝ եթէ սիրեցեալիցեմք, իցէք, իցեն:

Գերակատարի եզական՝ եթէ սիրեցեալէի, էիր, էր: Բազմաւորական՝ եթէ սիրեցեալէաք, էիք, էին:

Անորոշի եզական՝ յորժամ սիրեցեալ լինիմ, լինիս, լինի: Բազմաւորական՝ յորժամ սիրեցեալ լինիմք, լինիք, լինին:

Ապառնոյ եզական՝ եթէ սիրիցիմ, իցիս, իցի: Բազմաւորական՝ եթէ սիրիցիմք, իցիք, իցին» (անդ, 423ա-425ա):

Հարացույցին կցված են մի քանի դիտողություններ եղանակների կազմության վերաբերյալ: Քերականը հիշեցնում է, որ ստորադասականը հակված է ապառնին. «Գիտեա՛, զի ստորադասականք ամենայն ձգի յապառնին, այսինքն՝ յանկատարն, վասն այն ներկայականն ապառնօրէն լինի, իբր թէ ասիցէ ոք՝ եթէ սիրիցիմ, այժմ զի՞նչ արասցես ինձ, որ է ներկայական և է անկատար,

⁴⁷ Նույն տեղում:

⁴⁸ ՄՄ 841, 124բ:

յապառնին ձգի» (անդ, 425ա): Բերվում են նաև խոնարհման այն դեպքերը, երբ բայը ստանում է նախահար մասնիկ. «միայն սահմանականին յարակայ ամանակին երրորդ դէմն ի սկիզբն ունի և այն ոչ ամենայն, այլ այնք, որք ի հրամայականին երրորդ դիմաց ներկայ ամանակին են բաղաձայնիւք աւարտեալ, որգոն՝ տուր, էտուր, օծ, էօծ, հեղ, էհեղ, և աներևոյթին անցեալ ամանակն ևս ի սկիզբն ունի, որգոն՝ էսիրել» (անդ): Նշվում է, որ հոգնակին ձևավորվում է 2 վերջավորություն՝ -ք-ով և -ն-ով («սիրեմք, սիրեն»), լրացուցիչ նաև՝ -ատ, -ոտ, այսինքն՝ բազմապատկական կերպի ածանցներով. «Բայց այլ կերպիւ ևս յոգնական լինի, որբար՝ եզական՝ բեկեմ, կտրեմ, յոգնական՝ բեկոտեմ, կտրատեմ» (անդ): Այս ձևը իբրև հոգնակի ընդունում է նաև Սիմեոն Զուղայեցին՝ դարձյալ բերելով «բեկոտեմ» օրինակը⁴⁹:

խոնարհման հարացուցցի խորթ ձևերը հիմնականում ծագել են լատինաբանության միջավայրում՝ լատինական քերականությունների ազդեցությամբ⁵⁰ կամ փոխառվել են հունաբան քերականություններից: Դրանք ներկայացնում ենք խմբավորված՝ ըստ ընդհանուր հատկանիշների.

ա) -ի լծորդության հատկացում կրավորականության արտահայտմանը («սիրիլոյ, սիրի՛ր, մի՛ սիրեսցի» ևն),

բ) բայաչիմքերի շինծու ցոյականացում՝ իբրև կրավորականի ձև («սիրեցեալ, սիրիցիմ»)՝⁵¹,

գ) ներգործական և կրավորական սեռերի արհեստական տարբերակում՝ ե - է մասնիկների հակադրությամբ («սիրէի-սիրեի» ևն),

դ) Անցյալ անկատարի եզակի երրորդ դեմքի -իւր վերջավորության կիրառում՝ իբրև կրավորականի սեռանիշ, որը հորինել են հունաբան դպրոցի թարգմանիչները⁵² («սիրիւր»):

ե) դերբայների դիմայնացում՝ օժանդակ բայը կցելու եղանակով («սիրեալեմ, սիրեալէի, սիրեալիցեմ» ևն),

զ) է ածականի հոգում դերբային՝ իբրև անցյալի ժամանականիշ («էսիրել»):

Նշանակների կազմության վերաբերյալ նշելի է հետևյալը՝ ա. հրամայականի ներկան կազմված է բուն, արգելական հրամայականի և ստորադասականի ապառնու ձևերից, ապառնին՝ ստորադասականի ապառնու և հորդորական հրամայականի ձևերից, բ. ըղձականին հարադրվում է «մարտան» բառը, ստորադասականին՝ «եթէ», երբեմն՝ «յորժամ» շաղկապները, գ. ըղձականի ներկան

⁴⁹ Սիմեոն Զուղայեցի, էջ 111:

⁵⁰ Լատինաբան հայերենի տարբերակիչ հատկանիշների նկարագրությունը տե՛ս Վ. Համբարձումյան, Լատինաբան հայերենի պատմություն, Երևան, 2010, էջ 142-164:

⁵¹ Գ. Մուրադյան, «Լատինաբան հայերենի առնչությունը հունաբան հայերենին. արդի հայերենի ֆեռականական տեռմիաբանության ծագումը», ԲՄ № 19, 2012, էջ 348:

⁵² Գ. Մուրադյան, Հունաբանությունները դասական հայերենում, էջ 120:

կազմված է սահմանականի անկատարից, հարաձգականը՝ «լինիմ» բայի անցյալով բաղադրված ձևերից, հարական և գերակատարը՝ «եմ» բայի անցյալով բաղադրված ձևից, անորիշը և ապառնին՝ ստորադասականի ապառնուց, դ. ստորադասականի ներկան կազմված է բուն ստորադասականից, հարաձգականը՝ «լինիմ» բայով բաղադրված ձևից, հարական «եմ» բայի ապառնիով բաղադրված ձևից, գերակատարը՝ «եմ» բայի անցյալով բաղադրված ձևից, անորիշը՝ «լինիմ» բայի ապառնիով բաղադրված ձևից, ապառնին՝ նույն ձևով, ինչ ներկան: Այս ժամանակաձևերից մի քանիսը կազմությամբ տարբերվում են լատինատիպ այլ քերականությունների խոնարհման հարացույցներում տեղ գտած ձևերից, օր.՝ ըղձականի անկատարը՝ «մարտան սիրեալ լինէի», ըստ Զուղայեցու՝ «երանի թէ լանայի», ըստ Գալանոսի՝ «մարտան գովէի» ևն:

Ընդունելութիւնը (որ դերբայն է) սահմանված է ըստ անվանական և բայական հատկանիշների՝ իբրև «բառ հոլովական, առանց դիմաց և ընդունական ամանակաց» (անդ, 425ա) կամ այլ շարադասությամբ՝ «ընդունական ամանակաց առանց դիմաց» (ՄՄ 841, 125ա): Նշվում է 6 քերականական կարգ, որոնք առանձնաբար կամ միաժամանակ հատուկ են անվանը և բային՝ առաձգութիւն, ձև, տեսակ, թիւ, ժամանակ, հոլով:

Տեսակը, ձևը և թիվը, որոնք ընդհանուր են անվան և բայի համար, տրված են համանման բաժանումներով տեսակ. «նախագաղափար՝ սիրեալ, և ածանցական՝ սիրեցուցեալ», ձև՝ «պարզ՝ ոգեալ, բարդ՝ ստորոգեալ, յարաբարդ՝ հակաստորոգեալ», թիվ՝ «եզական՝ սիրեցեալ, յոգնական՝ սիրեցեալք» (ՄՄ 2018, 425բ):

Ընդունելության վերջածանցները 4-ն են՝ «-օղ, -իչ, -ումն, -եալ» (անդ, 425ա), այդպես է նաև Բ. խմբի ձեռագրերում⁵³, իսկ Ա. խմբում տրվում է միայն «-եալ»-ը⁵⁴: Ըստ այդմ՝ տարբերվում են նաև սեռերի արտահայտման ձևերը.

Ներգործութիւն. «ուսուցանօղ, ուսուցիչ, ուսուցումն, ուսուցեալ» / «սիրեալ»,

Կիր. «ուսանօղ, ուսանումն, ուսեալ» / «սիրեցեալ»,

Միջին. «բնակօղ, բնակիչ, բնակումն, բնակեալ» / «բնակեալ»: Բ. խմբի ձեռագրերում սա անվանված է ընդմիջական⁵⁵, որը հայտնի է նաև Սիմեոն Զուղայեցու վկայությամբ⁵⁶:

Սեռի տարբերակման և օրինակների այս արհեստականություններին տուրք են տվել նաև ժամանակի մյուս քերականները, հմմտ.՝ Սիմեոն Զուղայեցի, Կղեմես Գալանոս. «բնակօղ, բնակիչ, բնակեալ»⁵⁷ ևն:

⁵³ ՄՄ 2295, 35բ:

⁵⁴ ՄՄ 841, 125բ, ՄՄ 2286, 176ա, ՄՄ 2327, 182բ:

⁵⁵ ՄՄ 2295, ամդ:

⁵⁶ Սիմեոն Զուղայեցի, էջ 112 ևն:

⁵⁷ Կղեմես Գալանոս, էջ 6բ:

Վերջավորությունների զանազանությունները, սակայն, չի փոխվում ժամանակի ըմբռնումը. մեկ վերջավորության պարագայում բնականաբար ընդունվել է մեկ ժամանակ՝ անցյալը. «Ամանակ զանցեալն միայն ունի որպէս ամենայն ասացեալքս են» (ՄՄ 841, 125բ ևն), իսկ մյուս տարբերակում 4 վերջավորության մեջ միայն -եալ-ն է դիտվել ժամանականիշ, մնացյալի ժամանակային ցուցումը, ըստ քերականի, հստակ չէ. «Ամանակ զանցեալն միայն ունի պարզաբար, որ լինի եալ գաղափարան, որգոն՝ մաքրեալ, իսկ օղն, իչն և ումն, ոչ նշանակեն պարզաբար ժամանակ, թէպէտ ի տեղոջ ներկայի և ապառնոյ դինն» (ՄՄ 2018, 425բ):

Ընդունելությունը վերագրվում է 10 հոլով՝ այնքան, որքան անվանը: Անսխալ հոլովելու համար հեղինակը հանձնարարում է տարբերակել -եալ-ը և -ցեալ-ը (այսինքն՝ ցոյական հիմքով անցյալ դերբայը)՝ մեկին հատկացնելով բայական, մյուսին անվանական կիրառություն. «Եւ թէ գայստսիկ ոչ զանազանես ի միմեանց՝ բազում սխալանս լինի ընհոլովան, որգոն՝ խփելոյ, կոչելոյ, խփեցելոյ, կոչեցելոյ, խփելով, կոչելով, խփեցելով, կոչեցելով, որք են յոյժ հեռի ի միմեանց» (անդ): Չնայած այս խիստ սահմանին, բայի կազմության մեջ, ինչպես ցույց տվեցինք, ցոյական հիմքին տրված է կրավորական սեռանիշի արժեք, այսինքն՝ կանոնը հետևողականորեն կիրառված չէ: Այնուամենայնիվ, քանի որ այս հատվածը բացակայում է ամենավաղ ձեռագրի բուն բնագրից՝ լուսանցքային հավելում է, իսկ հետագա ձեռագրերում հիմնականում դուրս է թողնված, կարծում ենք՝ ներմուծվել է այլ անձի կողմից, ուստի տեղիք է տվել հակասությունների:

Հոգի նկարագրության մեջ ճիշտ կերպով զանազանվել են բուն հոգերը մյուս մասնիկներից, որոնց ավանդաբար հատկացվել է հոգի նշանակություն. «Յաւզ է մասն բանի անհոլով, որ զմերձաւորն և զհեռաւորն նշանակէ՝ հանդերձ երրորդ դիմօքն: Եւ են Գ. տառք՝ ս, դ, ն» (անդ):

Քերականը թեև լիովին չի արտացոլել հոգերի գործառությունը, նկատի է առել միայն դիմորոշությունը, սակայն դրանք զատելով հոլովական բառերից՝ ոչ միայն հակադրվել է հունաբան ավանդույթին, այլև առաջ է անցել ժամանակի քերականներից, որոնք ևս, կրկնելով նախորդներին, հոգերը համարել են հոլովական բառեր և նրանց շարքում դրել ցուցական, հարաբերական դերանունները, նաև կոչական մասնիկները:

Դերանունը, իբրև անվանը փոխարինող և դեմք առնող բառ, մեկնաբանվել է նորովի՝ ընդունելության հարաբերությամբ: Երկուսն էլ հոլովական լինելով, նաև «ընդունական» են՝ կրում են անվան և բայի հատկանիշներ, սակայն եթե ընդունելությունն ընդունում է ժամանակ՝ առանց դեմքի, ապա դերանունն ընդունում է դեմք՝ առանց ժամանակի. «Դերանուն է բառ հոլովական, ընդունական դիմաց թարց ամանակի» (անդ, 425բ):

Այս խոսքի մասի կառուցվածքում առանձնացվում է 5 քերականական կարգ՝ դեմք, թիւ, ձև, տեսակ, հոլով:

Դեմքը բաժանվում է երեք կերպերի՝ առաջին, երկրորդ, երրորդ, սրանք և թվի կարգը ներկայացնող եզակին ու հոգնակին բերված են առանց օրինակների, դիմաչին հատկացումները և թվի արտահայտման ձևերը պարզաբանված են հոլովների նկարագրության մեջ:

Դերանվան դասակարգումն ըստ կազմության մասամբ ինքնուրույն է: Ձևն ունի միայն երկու տեսակ՝ պարզ և բարդ. հարաբարդը բացակայում է, պարզ են «սա, դա, նա» դերանունները, իբրև բարդ դիտվել են «սոյն, դոյն, նոյն» դերանունները (անդ): Տեսակի մեջ, բացի նախագաղափար-ից և ածանցական-ից, տրված են նաև կրկնակի ածանց ունեցող ձևերը. քանի որ նախորդ քերականություններում ածանցավոր էր համարվում արմատական փոփոխությամբ հոլովաձևը, սրան գումարելով հոլովիչ՝ կազմվել է կրկնաձանցը. «նախագաղափար՝ ես, ածանցական՝ իմ, և կրկնաձական՝ իմոյ» (անդ, 426ա):

Դերանվան հոլովները, ինչպես անվան դեպքում, 10-ն են, որոնց հարացույցից էլ պարզ է դառնում բառերի այն կազմը, որ հատկացված է այս խոսքի մասին. «ես, դու, սա, դա, նա, ինքն, իւր», այն բառերը, որոնք ավանդաբար վերագրվել են հողին՝ «այս, այդ, այն, որ», նաև՝ «ով, ո ոմն, ոք, այլ, երկաքանչիւր, իւրաքանչիւր» (անդ):

Ամբողջական հարացույցներ ունեն հետևյալ դերանունները, որոնք հոլովված են և՛ շարքով, և՛ առանձնաբար.

ա. Ես, դու, սա, դա, նա.

«Ուղղական. եզական՝ ես, դու, սա, դա, նա, յոքնական՝ մեք, դուք, սոքա, դոքա, նոքա,

Սերական. եզական՝ իմ, քո, սորա, դորա, նորա, յոքնական՝ մեր, ձեր, սոցա, դոցա, նոցա,

Տրական. եզական՝ ինձ, քեզ, սմա, դմա, նմա, յոքնական՝ մեզ, ձեզ, սոցա, դոցա, նոցա, սոցայցր^{*}, դոցայցր^{*}, նոցայցր^{*58},

Կրական. եզական՝ յիս, ի քեզ, ի սմա, ի դմա, ի նմա, յոքնական՝ ի մեզ, ի ձեզ, ի սոսա, ի դոսա, ի նոսա, ի սոսում^{*}, ի դոսում^{*}, ի նոսում^{*59},

Գործիական. եզական՝ ինև, քև, սովաւ, դովաւ, նովաւ, յոքնական՝ մեօք, ձեօք, սոքօք, դոքօք, նոքօք,

Հայցական. եզական՝ զիս, զքեզ, զսա, զդա, զնա, յոքնական՝ զձեզ, զմեզ, զսոսա, զդոսա, զնոսա,

Սկզբնական. եզական՝ յինէն, ի քէն, ի սմանէ, ի դմանէ, ի նմանէ, յոքնական՝ ի մէնջ, ի ձէնջ, ի սոցանէ, ի դոցանէ, ի նոցանէ,

⁵⁸ ՄՄ 2295, 37ա: Աստղանիշով տրված այս և մյուս ձևերը բացակայում են հարացույցի համար հիմք ծառայած ձեռագրից և փաղված են այլ ձեռագրերից՝ հոլովման պատկերը հնարավորինս ամբողջացնելու նպատակով:

⁵⁹ Նույն տեղում:

Պատմական. եզական՝ զինէն, զքէն, զսմանէ, զդմանէ, զնմանէ, յոքնական՝
զմէնջ, զձէնջ, զսոցանէ, զդոցանէ, զնոցանէ,

Բակառական. եզական՝ զինև, զքև, զսովաւ, զդովաւ, զնովաւ, յոքնական՝
զմեօք, զձեօք, զսոքօք, զդոքօք, զնոքօք,

Կոչական. եզական՝ դու, յոքնական՝ դուք»:

բ. Այս, որի հոլովածները ցուցված են նաև այդ, այն դերանուններին.

«Ուղղական. եզական՝ այս, յոքնական՝ այսք, այսոքիկ,

Սեռական. եզական՝ այսմ, այսր, այսորիկ, այսմիկ, յոքնական՝ այսց, այ-
սոց*⁶⁰, այսոցիկ,

Տրական. եզական՝ յայս, այսմ*, այսմիկ*⁶¹, յոքնական՝ յայսոսիկ, այսցր*,
այսոցիկ*⁶²,

Կրական. եզական՝ յայսմ, յասմիկ, յոքնական՝ յայսոսում, յայսոսիկ*⁶³,

Գործիական. եզական՝ այսու, այսուիկ, յոքնական՝ այսոքիւք,

Հայցական. եզական՝ զայսս, յոքնական՝ զայսոսիկ,

Սկզբնական. եզական՝ յայսմանէ, յոքնական՝ յայսց, յայսցանէ,

Պատմական. եզական՝ զայսմանէ, յոքնական՝ զայսց*⁶⁴, զայսցանէ,

Բակառական. եզական՝ զայսու, զայսուիկ*⁶⁵, յոքնական՝ զայսոքիւք»:

գ. Ով*, ոք*⁶⁶, որ, իւր, ոմն, ինքն.

«Ուղղական. եզական՝ ով, ոք, որ, իւր, ոմն, ինքն, յոքնական՝ ոյք, որք, իւրք,
իւրեանք, ոմանք, ինքեանք,

Սեռական. եզական՝ ոյր, որոյ, որում, ում, իւրոյ, իւրեան*⁶⁷, ումեմն,
ուրումն, ումեք, ուրուք, ումեք, ինքեան*⁶⁸, յոքնական՝ ոյց, որոց, իւրոց, իւ-
րեանց, ոմանց, ինքեանց,

Տրական. եզական՝ յոր, յիւր, յոմն, յումեք*⁶⁹, յինքն, որում*, ում*, ումեմն*,
ումեք*, իւրում*, ինքեան*⁷⁰, յոքնական՝ յորս, ոյցր*, իւրոց*⁷¹, յիւրս, իւ-
րեանցր*⁷², յիւրեանս, յումանս, յինքեանս,

⁶⁰ ՄՄ 841, 126բ:

⁶¹ ՄՄ 2295, 38ա:

⁶² Նույն տեղում:

⁶³ Նույն տեղում:

⁶⁴ Նույն տեղում, 38բ:

⁶⁵ Նույն տեղում, 38ա:

⁶⁶ ՄՄ 2327, 183բ-184ա. այս դերանունների հոլովածները հետագա շարադրամբում բերված են առանց աստղանիշի:

⁶⁷ ՄՄ 2295, 38բ:

⁶⁸ Նույն տեղում:

⁶⁹ ՄՄ 841, 127ա:

⁷⁰ ՄՄ 2295, 38բ:

⁷¹ Նույն տեղում, 39ա:

⁷² Նույն տեղում:

Կրական. եզական՝ յորում, յիրում, յումեմն, յումեք, յինքեան, յոքնական՝ նորս, նիրս, նիրեանս, նոմանս, նինքեանս,

Գործիական. եզական՝ որով, իրով, ոմամբ, ինքեամբ, յոքնական՝ որովք, իւրովք*⁷³, իւրեամբք, ոմամբք, ինքեամբք,

Հայցական. եզական՝ զո, զոր, զիր, զոմն, զինքն, յոքնական՝ զոյս, զորս, զիրս, զիրեանս*⁷⁴, զոմանս, զինքեանս,

Սկզբնական. եզական՝ յորմէ, յումմէ, յիրմէ, յումեմնէ, յումեքէ, յինքենէ, յոքնական՝ յոյց, յորոց*⁷⁵, յիրոց, յիրեանց, յոմանց, յինքեանց,

Պատմական. եզական՝ զորմէ, զումմէ, զիրմէ, զումեմնէ, զումեքէ, զինքենէ, յոքնական՝ զոյց, զորոց, զիրոց, զիրեանց, զոմանց, զինքեանց,

Բակառական. եզական՝ զորով, զիրև, զիրով, զոմամբ, զինքեամբ, յոքնական՝ զորովք, զիրովք, զիրեամբք, զոմամբք, զինքեամբք» (անդ, 426ա-427ա):

Այս հարացույցներից կարելի է հետևեցնել մի քանի նկատառում, ա. դերանունների հոլովման պատկերը ձեռագրերում միօրինակ չէ, բոլոր հոլովածները միավորելով ի հայտ են գալիս իրար հակասող կանոնավոր և արհեստական ձևեր, օր.՝ «այսց – այսոց», «ի սոսա – ի սոսում», «յայստսիկ – յայստսում», բ. սեռական և տրական հոլովները հստակորեն տարբերակված չեն, տրականի որոշ ձևեր դրված են սեռականի տակ, օր.՝ «որում, ումեմն, ումեք», գ. երբեմն տրվում են կրկնակ ձևեր՝ «իւրոյ – իւրեան», այսպիսի զուգբեր են կազմում նաև նախդրիվ տրականի ձևերը՝ «յոր – որում, յիր – իւրում», դ. կայուն կիրառություն ունեն հունաբան թարգմանություններից ավանդված արհեստական ձևերը՝ -ր հոլովակերտ լրացուցիչ մասնիկը⁷⁶ «սոցայցր, դոցայցր, նոցայցր», ն նախդիրը⁷⁷ «նորս, նոմանս, նիրս, նիրեանս, նինքեանս», «երկաքանչիւր» դերանունը⁷⁸. սրանք հատուկ են առհասարակ լատինատիպ քերականութուններին⁷⁹:

Դերանունների իմաստային ըմբռնումը տարտամ է և չի հանգում փոքրիշատե համոզիչ տարբերակման. «Արդ, դերանունութիւնս կամ զանձն նշանակէ կամ զանձնականն: Անձն որպէս էս, իսկ անձնական, որպէս իմ» (անդ, 426ա): Կարծես փորձ է արվել տարանջատելու անձնական և ստացական դերանունները, բայց հետագա շարադրանքից երևում է, որ անձնական կարող է լինել նաև անունը. «Եւ անձնականացս հոլովք բազում կերպիւ լինին, քանզի է, որ անձն և անձնականն եզական է, որբար՝ տան իմոյ, և է, որ անձն և անձնականն յոգնական, որզան՝ տանց մերոց: Եւ է, որ անձն եզական, իսկ անձնականն յոգնական,

⁷³ Նույն տեղում:

⁷⁴ Նույն տեղում:

⁷⁵ Նույն տեղում:

⁷⁶ Գ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 107:

⁷⁷ Նույն տեղում, էջ 111-113:

⁷⁸ Նույն տեղում, էջ 117-118:

⁷⁹ Գ. Ջաֆուկյան, էջ 40, 100, 110, 139 ևն:

որգոն՝ տան իմոց: Եւ է, որ անձն յոգնական, իսկ անձնականն եզական, հիբար՝ տան մերոյ» (անդ, 426աբ):

Դիմային հատկացման մեջ ևս քերականը թույլ է տվել անճշտություն՝ երրորդ դեմք համարելով «այս, այդ, այն» դերանունները, այս դեմքին եռաշարք այլ ցուցականներ («սա, դա, նա») վերագրել է նաև Սիմեոն Զուղայեցին⁸⁰:

Նախադրությունը սահմանվում է իբրև «բառ անհոլով, որ նախադրի ի մասունս բանի» (անդ, 427ա) նույնանալով Սիմեոն Զուղայեցու սահմանմանը՝ «բառ անհոլով, որ առադրի ի մասունս բանի»⁸¹: Նախորդ քերականությունների հետևողությամբ՝ նախդիր են համարվում նաև նախածանցները: Առանձնացված է 3 խումբ.

ա. Բարձականք. բացասական կամ ժխտական նշանակությամբ նախդիրներ և նախածանցներ՝ տը, ան, թարց, առանց, ապ. «տըքուն, անքուն, թարց քնոյ, առանց քնոյ»,

բ. Չարդք. ոճավորման միջոցներ համարված մասնիկներ՝ ներ, արտ, ատր. «ներընդունակ, արտորոց, ատրասայց»,

գ. Չարդք և հարկաւորք. ըստ կիրառության՝ և՛ ոճական նպատակով, և՛ անհրաժեշտաբար գործածվող մասնիկներ՝ արդ, տի, ըստ, ըզ, ցը, ըն, յ, ի, առ, ընդ. «արդ ընդէ՛ր, տի միանգամայն, ըստ այնմ, զայս, ցնա, նաստեղս, յոգւոջ, ի մեր, առ նա, ընդ այն» (անդ):

Այստեղ ևս համընկնում կա. Զուղայեցին ճանաչել է բարձականք և զարդք տեսակները⁸²:

Այնուհետև հաջորդում են մի քանի դիտողություններ՝ նախդիրների իմաստային առնչությունների վերաբերյալ. «Եւ ի սոցունց երբեմն ի միում տեղւոջ համազարք լինին, վասն զի Յոյն երբեմն ընդ Չային համազարք է, հիկէն՝ հարցին ցնա, հարցին զնա: Եւ երբեմն ընդ՝ Յիոյն, որգան՝ մինչև ցայս, մինչև յայս: Եւ երբեմն՝ ընդ՝ առին, հիզան՝ ասէ առ նա, ասէ ցնա, իսկ ընն, Յին և Ին ի կրականին հոլովն են համազարք, նաև Ին, և առ, և ընդ ևս երբեմն են համազարք են, հիբար՝ ի քեզ, առ քեզ, ընդ քեզ» (անդ, 427աբ), Բ. խմբի ձեռագրերում նշվում է նախդիրների համազորության ևս մեկ դեպք՝ «Ինն և Յին անզանազանապէս համազորք են, բայց ոչ դնին ի միում տեղւոջ, քանզի Ինն նախադասի բաղաձայնի, իսկ Յին՝ ձայնաւորի» (ՄՄ 2295, 40ա):

Մակբայը, որ, ինչպես նշեցինք, անվանված է առքայ, սահմանվում է որպես «մասն բանի անհոլով նշանակիչ տեղւոջ և ամանակի և դասութեան և որպիսու-

⁸⁰ Սիմեոն Զուղայեցի, էջ 116:

⁸¹ Նույն տեղում, էջ 124:

⁸² Նույն տեղում, էջ 124-125, ընդ որում՝ Լեզվաբանական բառարանում բարձական նախդրի առաջին վկայող համարվել է Սիմեոն Զուղայեցին:

թեանց իրակութեանց և այլոց բազմաց ստորոգականաց՝ թարց դիմաց և անուանակոչութեան» (ՄՄ 2018, 427բ), այսինքն՝ նկատի են առնված նրա ձևաբանական և շարահյուսական հատկանիշները՝ այն, որ թեքական չէ, գուրկ է դեմքից և ունի պարագայական բազում կիրառություններ: Իսկ միջարկությունը, որ դրված է մակբայների մեջ, հավանաբար դիտվել է միայն իբրև բնական ձայնի վերարտադրություն, ուստի և համարվել է անվանելու հատկությունից գուրկ:

Մակբայի ձևային խմբեր չեն առանձնացվում, սահմանումից անմիջապես հետո նկարագրվում են իմաստային խմբերը, որոնք Ց-ն են.

ա. Տեղական. 2 խումբ՝ «որոնական՝ ուր, ուստի, ուր անաւր, ուր ուրեք», «յայտական՝ ահա, ահաւասիկ, աւասիկ^{*83}, աւադիկ, աւանիկ, աստ, այդր, այնր^{*84}, անտ, աստանաւր, այդրանաւր, անտանաւր, աստի, այտի, անտի, անտուստ, աստուստ, այդրուստ^{*85}, այնտրուստ, բարձր^{*86}, վեր, գեր, վերայ, մակ, վայր, վերոյ, ներքոյ, արտաքոյ^{*}, ենթ^{*}, ստորեւ^{*87}, մինչև աստ»:

բ. Ամանական. 2 խումբ՝ «ցուցական՝ երբ, յորժամ, այժմ, այնժամ, արդ^{*}, այսօր^{*}, վաղիւ^{*88}, իբրև, երբեմն, մերթ, երբէք, սերկ, հետէ, մինչև ցայս, ցայտ, ցայն, մինչ, չևևս, չև, դեռ, տակաւին, առժամայն, իսկոյն, յանկարծակի^{*89}, վայրկեան», «անցուցական՝ միշտ, յանապազ, ցանգ, յար, յաւէժ»:

գ. Դասական. 4 խումբ՝ «շարունական՝ նախ, վաղ, առաջի^{*90}, յառաջ, յառաջոյ, շուրջ^{*91}, յետ, յետոյ, գհետ, գկնի, ի միասին, միրստմիտջէ, այսու հետև», «որոշական (նաև՝ «տարորոշական»)՝ բաց, զատ, առանձին, ևեթ^{*93}», «մտական (նաև՝ «մերձական»)՝ մերձ, հուպ, ևեթ^{*95}, մօտ, հանդերձ, յանդիման^{*96}», «բացական՝ հեռի, տար»:

դ. Ուրպիսական. «ոչ զիրն ցուցանեն, և ոչ զիրակութիւն, այլ զորպիսութիւնս իրակութեանց». 2 խումբ՝ «հարցական՝ որպէս, զիարդ, զինչ, որպիսի

83 ՄՄ 2295, 40բ:

84 ՄՄ 841, 128ա:

85 Նույն տեղում:

86 ՄՄ 2295:

87 Նույն տեղում:

88 Նույն տեղում:

89 Նույն տեղում:

90 ՄՄ 841:

91 ՄՄ 2295, անդ:

92 Նույն տեղում:

93 Նույն տեղում:

94 ՄՄ 2327, 185ա:

95 ՄՄ 841:

96 ՄՄ 2295, 41ա:

ինչ, զի^{*97}», «պատասխանական»՝ սրանց յոթ վերջավորություն է հատկացվում. «պէս, բար, օրէն, ոք, ակի, ացի, ըէն, որգոն՝ գեղեցկապէս, տարմբար, մարդկօրէն, բարւոք, թուլակի, բազկացի, հայերէն»:

Ե. Յանձնառական. 2 խումբ՝ «ստորադասական (նաև՝ «ստորասական»⁹⁸) այոյ, հայ», «հաստատական՝ արդարև, իսկ, յայտ, յայտնի*, յուշ*, լուիլու*, ամէն^{*99}»:

զ. Ապուսական. 3 խումբ՝ «բացասական՝ չէ, ոչ, ոչ իւիք, ոչ միով իւիք, յուրաստ^{*100}», «փոխերդմական՝ տա, քաւ», «հրաժարական՝ մի, մի իւիք, մի եզով իւիք»:

է. Ախտական, «թարց անուանակոչութեան և իրակութեան զիրս անձին նշանակեն». 10 խումբ՝ «ըղձական՝ իցէ, օշ, մարտան, երանի», «հեշտական՝ վաշ, յա», «սպառնական՝ իշտ, տի, օն և օն լիցի», «հեգնական՝ իշ, վահ, ահ, եհ», «զարմացական՝ ոհ, իհ, բաբէ», «ասաղական՝ ոհ, ախ, ուխ, վախ», «եղկական՝ վայ, աւաղ, եղուկ», «մոռմոռական՝ իշ, ուհ», «տրտմական՝ էհ, ըհի, ըհը, հը», «աշխատական՝ յէք, ջէք»:

ը. Անախտական (նաև՝ յոբնաստորոգական¹⁰¹). 10 խումբ՝ «հանրական՝ համուռ, համօրէն^{*102}, միահաղոյն, համայնգաման, բնաւ, բնաւին, ամէն, ամէնայն*, առհասարակ*, համակ^{*103}, բովանդակ, ամենևին, բոլորովին, գլխովին, ոչ ոք, իսպառ^{*104}», «բանական՝ մի անգամ, երկիցս, երիցս, չորիցս, քառիցս^{*105}», «պատկական՝ ևս, դարձեալ, վերստին, միւս անգամ^{*106}», «աստական՝ յորդ, յոյժ, խիստ, կարի, յաւետ, մանաւանդ, առաւել*, աւելի^{*107}», «արագական (նաև՝ «երագական»¹⁰⁸)՝ վաղվաղ, հապա, կանխաւ*, շոյտ^{*109}, շուտով, փութով, փոյթընդփոյթ, վաղվաղակի, փութանակի^{*110}, ստէպ», «յամրական՝ անագան, հագիւ, յամր^{*111}», «առհրամայական՝ աղէ, թող, բեր, բայ», «ա-

⁹⁷ Նույն տեղում:

⁹⁸ Նույն տեղում:

⁹⁹ ՄՄ 2295:

¹⁰⁰ Նույն տեղում:

¹⁰¹ ՄՄ 2295, 41բ:

¹⁰² Նույն տեղում:

¹⁰³ Նույն տեղում:

¹⁰⁴ Նույն տեղում:

¹⁰⁵ Նույն տեղում, 42ա:

¹⁰⁶ Նույն տեղում:

¹⁰⁷ Նույն տեղում:

¹⁰⁸ Նույն տեղում, ՄՄ 2327, 185բ:

¹⁰⁹ ՄՄ 2295:

¹¹⁰ Նույն տեղում, ՄՄ 841, 128բ:

¹¹¹ ՄՄ 2295:

նուղղական՝ տարապարհակ, տարապարտուց, վայրապար*, ի նանիր*, վարկ-պարագի*, ընդվայր*, իզուր*¹¹²», «վարկական՝ գրեթէ, համարեա թէ*¹¹³», «ալէլուեայ՝ եբրայեցերէն է» (անդ, 427բ-428բ), և ևս մեկ տեսակ, որ հանդիպում է միայն Բ. խմբի ձեռագրերում՝ «պատշաճական՝ պարտ, արժան, ի դէպ, ի ճահ, անկ, պատշաճ» (ՄՄ 2295, 42ա):

Վերջում դատողություններ են արվում մակբայների թեքման մասին. քերականը նկատել է տալիս, որ մակբայը խոնարհվելու դեպքում վերածվում է բայի, օր.՝ «մերձ-մերձեցաւ», այդպիսով հաստատելով դրա «անհոլով» լինելը՝ միևնույն ժամանակ փորձում է ցույց տալ, որ այն երբեմն կարող է թեքվել: Այդպիսի օրինակ է «ամենայն»-ը, որը հոլովվում է ըստ անվան, և ոչ ըստ բայի, բայց և անուն չէ՝ այս պնդմանը հետևում է տարօրինակ բացատրություն. «գի ամենայն անուն, որ ոչ նշանակէ զանհատն, հոլովի ըստ բային» (ՄՄ 2018, 428բ):

Մակբայների նկարագրության վերաբերյալ նշելի է հետևյալը. ա. քերականը, հաճախ դիմելով Թարգմանչի դասակարգմանը և օրինակներին («մի իւիք, մի եզով իւիք, ինձ թուի» ևն), նաև մեծապես փոփոխել է ավանդական բաժանումը, կատարել է վերադասավորումներ՝ իմաստային զանազան հատկացումներով և ըստ այդմ՝ կիրառության մեջ դրել տասնյակ նոր անվանումներ, ինչպես՝ որոնական, անցուցական, անախտական, յոճնաստորոգական, պատկական, վարկական, պատշաճական, անուղղական ևն (մեծ թվով անվանումներ էլ, որոնք հունաբան չեն, վկայված են լատինատիպ այլ քերականություններում, օր.՝ Սիմեոն Զուղայեցի՝ տրտմական, առհրամայական, համբալկան ևն, Կղեմես Գալանոս՝ յայտական, ստորասական, ըղձական ևն), բ. մակբայների մեջ դասելով միջարկությունները՝ դրանք խմբավորվել է հիմնականում ախտական անվան տակ, ինչպես Սիմեոն Զուղայեցին, միայն թե Զուղայեցու երանական-ը կոչել է ըղձական և հավելել նոր տեսակ՝ աշխատական-ը, դ. մակբայի կազմությանը անդրադարձել է դրա տեսակների նկարագրության մեջ՝ առանձնացնելով որպիսական, այսինքն ձևի մակբայի 7 ածանց. -պէս, -բար, -օրէն, -ոք, -ակի, -ացի, -րէն, ե. մակբայները ներկայացրել է խայտաբղետ կազմով ներառելով նաև նախադրություններ՝ «գեր, մակ, ենթ», հոլովված դերանուններ՝ «այդր, այնր» ևն:

Վերջին խոսքի մասը՝ շաղկապը, ներկայացված է այն հատկանիշով և գործառությունամբ, որ ձևակերպել էր դեռևս Թարգմանիչը. «Շաղկապ է բառ անհոլով, որ շաղկապէ և մեկնէ զտրամախոհութիւն ոճով» (անդ):

¹¹² Նույն տեղում:

¹¹³ Նույն տեղում:

Շաղկապները, ինչպես նշել ենք, ձեռագրերում հանդիպում են մի քանի դասակարգմամբ՝ բաղկացած 10, 14 կամ 15 տեսակներից: Բայց սրանցից ոչ բոլորն են խստորեն տարբերակված՝ որոշ տեսակներ համընկնում են, մի քանիսը անվանումներով են տարբերվում կամ սահմանումներով, իսկ երբեմն էլ սոսկ դասակարգման սկզբունքն է այլ, այսինքն՝ միևնույն խումբը մերթ դիտված է տեսակ, մերթ ենթատեսակ: Դրանք ի մի բերելով՝ կարելի է տալ հետևյալ ընդհանուր բաժանումը.

ա. Յոզմառական / շարամանական: «Յոզմառական է, որ զբազումն շարաման է, և է և» (Ա. խ.): Բ. խմբի ձեռագրերում սա անվանված է շարամանական՝ «որ ոչ միայն զբառսն, այլև զիրսն և զիրակութիւնն ընդ մի առադրէ, որ է և»:

բ. Եզառական՝ անջատական / տոռհական, կամաուռական / կերպափոխական, ակամայական / վարանական: «Եզառականք են, որք ի բազում շարադրութեանց զմինն առնուն», բաժանվում է 3 ենթատեսակի. «անջատական՝ կամ», «կամաուռական՝ իսկ, բայց, այլ, նա, սակայն, համայն», «ակամայական՝ գէթ, գոնեայ, փարթար» (Ա. խ.): Սրանք Բ. խմբի ձեռագրերում հանդես են գալիս իբրև առանձին տեսակներ՝ ինքնուրույն անվանումներով և սահմանումներով. «Տրոհական է, որ միայն զբառսն շարայարէ, իսկ զիրսն և զիրակութիւնսն անջատէ: Եւ է՛ կամ», «Կերպափոխականք են, որք զհետագայ բանն ընդ անցելոյն զանազանեն: Եւ են այսք՝ բայց, իսկ, այլ, սակայն», «Վարանականք են, որք յորժամ ակամայ ընտրելի լինի երկրորդն, յայնժամ առնանին: Եւ են այսք՝ գէթ, գոնեայ, փարթար»:

գ. Հաւատարմական / հաւաստական, յայտնողական: «Հաւատարմականք են, որք հաւաստի առնեն զիրն, և են այսք՝ քանզի, վասն զի, զի» (Ա. խ.): Սրա շաղկապները Բ. խմբի ձեռագրերում բաշխված են 2 տեսակների մեջ. «Հաւաստականք են, որք հաւաստի առնեն զասացեալն: Եւ են այսք՝ զի, քանզի, վասն զի», «Յայտնողական է, որ զանկատարութեան բանին բացահայտելով կատարէ: Եւ է՛ զի»:

դ. Տարակուսական: Երկու խմբի ձեռագրերում անվանումը և ենթատեսակները նույնն են, սահմանումները՝ տարբեր. տարակուսականներ են, «որք ընդ տարակուսական հարցման և ընդ պատասխանույ յարմարին» (Ա. խ.), «որք ընդ անգիտանալն արտադրին» (Բ. խ.): Ենթատեսակները 2-ն են՝ «հարցականք՝ արդէօք, էր, ընդէր, էրում, զմէ, հիմ, իսկ ընդէր, իմ իմիք», «պատասխանականք՝ թերևս, ինձ թուի»:

ե. Ընդմիջական / պատճառական: Նույն «վասն, յաղագս, սակս» շաղկապներն ստացել են կրկնակի մեկնաբանություն և անվանում. «Ընդմիջականք են, որք ընդ դերանուան և կամ այլ մասանց շարակցեալք՝ զտարակուսանս և

զհաւաստիս յարկացոցեն» (Ա. խ.), «Պատճառականք են, որք ընդ հարցման և ընդ պատասխանուոյ յարմարին, յաղագս պատճառից» (Բ. խ.):

զ. Հաւանական: Երկու խմբում էլ հավանական կոչված բառերին («ապա ուրեմն, ապա, ապաքէն, ուրեմն, ապաքէն ցապաք») հատկացված է մակաբերական նշանակութիւն, սակայն տարբեր ձևակերպումներով «Հաւանականք են, որք ընդ ճառելն ինչ՝ հաւանաբար ածէ ի վերայ զշաղկապս» (Ա. խ.), «...որք զկնի ճառելոյն ընդ եզրակացութեանն յարառոցին» (Բ. խ.):

է. Անհաւանական / երկրորդախնդրական: Այս անվանումներով կոչվել է «Թէպէտ» շաղկապը՝ ըստ բացասման հատկանիշի՝ «ընդդէմ հաւանականին» (Ա. խ.), և ըստ խնդրական իմաստի՝ «զկնի իւր բանին, այլ ևս բան պահանջէ» (Բ. խ.):

Հետևյալ երկու տեսակները համեմատվող խմբերում նույնական են՝
ը. Ընդդիմահարցական. այսինքն՝ այն բառերը, որոնք «հարցմամբ զպատասխանին յայտնեն, և են այսք՝ արդեօք, միթէ»:

թ. Բաղդատական, որը շուրի սահմանում և տրված է «քան» շաղկապով: Որոշ տեսակներ առավելապես ինքնուրույն են և չեն կազմում խմբեր՝

ժ. Անհաւաստական. պայմանի շաղկապներ, որոնք «ոչ հաւաստի առնեն զասացեալսն, և են այսք՝ զի թէ, եթէ» (Ա. խ.):

ժա. Բայաւարտական. մեկնական շաղկապ, «որ առաւել յաւարտումն բայի դնի: Եւ է՝ թէ» (Բ. խ.):

ժբ. Ապուսահետևական. հակադրական շաղկապ, «որ միշտ զկնի բացբարձականացն դնի: Եւ է՝ այլ» (Բ. խ.):

ժգ. Ստորադասական. կախյալ հարաբերութիւն արտահայտող շաղկապ, որ «ընդ ստորանկեալ բանի դնի: Եւ են այսք՝ թէ, եթէ» (Բ. խ.):

Վերջում հիշատակվում է նաև թարմատարը՝ «իգն, իբր, իմն», որը սակայն իբրև հավելագիր բառ՝ դուրս է թողնված դասակարգումից:

Այս դասակարգումը իր իմաստային ընդգրկմամբ և տեսակների բազմազանութիւնով տալիս է շաղկապական համարված բառերի ամենամանրակրկիտ նկարագիրը՝ թե՛ նախորդ, և թե՛ լատինատիպ քերականութիւնների համեմատութիւնով: Դրանց անվանումները, բացառութիւնով մի քանիսի, որոնք ունեն հունաբան նախորինակներ (անջատական, վարանական, տարակուսական), գրեթե անխտիր նոր կազմութիւններ են: Այս պատկերը, սակայն, պայմանավորված է նաև շաղկապների կամայական ընտրութիւնով, քանի որ խմբավորված ոչ բոլոր բառերն են շաղկապներ՝ քիչ չեն այնպիսիք, որոնք լատինատիպ այլ քերականութիւններում հանդես են գալիս իբրև նախդիրներ՝ «վասն, յաղագս, աղագաւ, սակս», մակբայներ՝ «գէթ, գոնեայ, փարթար, արդէօք» ևն:

Գ. Կեստադրական, ուղղագրական տեղեկություններ: Աշխատությունների վերջում «հրատք ի քերականութիւնն» վերնագրի տակ բերված են կեստադրական և ուղղագրական ցուցումներ: Նախ առանձնացվում է առոգանության 10 նշան՝ շեշտ, բուֆ, պարոյկ, երկար, թաւ, մակակէտ, ենթամնայ, ստորատ, միջակէտ, վերջակէտ (ՄՄ 2018, 429բ): Սրանց հիմնականում տրված են այնպիսի մեկնաբանություններ, որոնք հանդիպում են նաև նույն շրջանի քերականական այլ երկերում, հմմտ.՝

«Շեշտն սրէ զձայն,... նաև սա որոշէ՝ ուրեք զբառն ի բանէն» (անդ). Սիմեոն Զուղայեցի՝ «Շեշտն սրէ զձայն վանգին,... և սովաւ որոշի բառ ի բանէ»¹¹⁴:

«Բուլթն հարթէ զձայնն» (անդ). Սիմեոն Զուղայեցի՝ «Բուլթն հարթէ զձայն վանգին»¹¹⁵:

«Պարոյկն ի վերայ հարցականացն է անգ» (անդ). Սիմեոն Զուղայեցի՝ «Պարոյկն՝ ի վերայ հարցականացն է»¹¹⁶:

«Երկարն՝ ի վերայ հիացականացն» (անդ). Սիմեոն Զուղայեցի՝ «Երկարն ի վերայ հիացականացն է»¹¹⁷:

«Թանն՝ ի վերայ թաւացեալ լեան» (անդ). Հովհաննէս Հոլով՝ «Կոշի թաւ և դնի ի վերայ փունից թաւացելոց»¹¹⁸:

«Մակակէտն ի վերայ նախդիր ինոյ և ի վերայ դատի, յորժամ ի դերկալին փոխարկի» (անդ), Սիմեոն Զուղայեցի՝ «Մակակէտն դնի ի վերայ նախդիր ինոյ,... նաև՝ դնի ի վերայ լերկալինին»¹¹⁹:

«Ենթամնայն, յորժամ բարդեալ բառք ոչ իցեն տառիւք շաղկապեալ, ի ներքոյ դնի, որբար՝ օրէնսուսոյց...¹²⁰, այլև թէ յաւարտ տողին բառն թէրի մնասցէ, ի ներքոյ ձայնաւոր տառին դնի, որպակ՝ գթած» (անդ, 429բ-430ա), Սիմեոն Զուղայեցի՝ «Ենթամնայն՝ յորժամ բարդեալ բառք ոչ իցեն կցեալք տառիւք, ի ներքո դնի, որպէս՝ օրէնսուսոյց, այլև յորժամ առաջին վանգն բառից ի վերջնում տողին իցէ, և վերջին տառ վանգին ձայնաւոր իցէ, ի ներքոյ դնի, որպակ՝ գրթած»¹²¹:

¹¹⁴ Սիմեոն Զուղայեցի, էջ 219:

¹¹⁵ Նույն տեղում:

¹¹⁶ Նույն տեղում:

¹¹⁷ Նույն տեղում, էջ 219-220:

¹¹⁸ Հովհաննէս Հակոբ Կոստանդնուպոլսեցի (Հոլով), Զտութիւն հայկաբանութեան կամ քերականութիւն հայկական, Հոռոմ, 1674, էջ 185:

¹¹⁹ Սիմեոն Զուղայեցի, էջ 220:

¹²⁰ Մէջբերել ենք միայն այն օրինակները, որոնք նույնական են համեմատվող սահմանումներում:

¹²¹ Նույն տեղում:

«Ստորատն զանկատարութիւն տրամախոհութեան ցուցանէ, որզան՝ ոչ ես, այլ շնորհքն Աստուծոյ» (անդ, 430ա), Սիմեոն Զուղայեցի՝ «Ստորատն է, որ զկնի անկատար բանից դնի առ ի նշանակելոյ զանկատարութիւն տրամախոհութեան, որկէն... եւս ոչ ես, այլ շնորհքն Աստուծոյ որ յիս»¹²²:

Համեմատաբար ինքնուրույն են միջակետի և վերջակետի բացատրությունները՝ «միջակէտն զխառնակումն տրամախոհութեան ի միմեանց ոճով մեկնէ», «վերջակէտն զկատարումն տրամախոհութեան ցուցանէ» (անդ):

«Յաղագս յիսխնդրութեան» հատվածում ըստ խոսքի մասերի տրված են յ-ի գրությունների առանձնահատկությունները, որոնց հիմքում Արիստակեսի ուղղագրական կանոններն են¹²³: Այսպես, վերջնահանգ յ-ի գրությունը՝

ա. հատուկ և հասարակ անուններում. «Իսկական անուանք ուղղականք ոչ առնուն Յի, որզան՝ եկն Յուդա, իսկ հոլովականք՝ առնուն, որբար՝ դատերք Յուդայ: Բայց պատահականքն՝ թէ ուղղականք և թէ հոլովականք, առնուն, որզոն՝ քահանայ, ծառայ, քրիստոնեայ, քահանայի, ծառայի, քրիստոնէի, հայր, հարք»,

բ. բայի եղանակային ձևերում. «Բայք հրամայականք ոչ առնուն Յի, իսկ այլքն առնուն, որզան՝ գնա դու ի տուն, գնայ Պետրոսն ի տուն»,

գ. ընդունելության հոլովաձևերում. «Ընդունելութեան հոլովքն Յի առնուն, որզոն՝ սիրելոյ, սիրեցելոյ»,

դ. դերանվան թվակազմության մեջ. «Դերանուանցն յոգնականքն ոչ առնուն Յի, որզոն՝ սոքա, սոցա: Իսկ եզականքն՝ են, որք առնուն, և են, որք ոչ առնուն, քանզի տեսակին նախագաղափար և ածանցականն՝ ոչ առնուն, հիբար՝ ես, դու, սա, դա, նա, իմ, քո, սորա, դորա, նորա, իսկ կրկնածականքն առնուն, որբար՝ իմոյ, քոյ, սորայ, դորայ, նորայ»,

ե. մակբայների մեջ. «Առբայքս յայտքիկ Յի առնուն՝ վերայ, վերոյ, ներքոյ, յառաջոյ, յետոյ, յայ, վայ, աղեղուղիայ: Իսկ այսցր ոչ է պիտո՞ ահա, այո, հա, տա, հապա, բա»,

զ. շաղկապների մեջ. «Շաղկապիցն ոչ է պիտոյ Յի, որզան՝ ապա, ապա ուրեմն» (անդ):

Այսպիսի ցուցումներ տեղ են գտել նաև լատինատիպ այլ քերականություններում, սակայն ձևակերպման և մատուցման ոճով մեր քննած հատվածին առավելապես մոտ է Սիմեոն Զուղայեցու շարադրանքը, որտեղ նշված են նույն կանոնները՝ ըստ խոսքի մասերի հաջորդականության¹²⁴:

¹²² Նույն տեղում, էջ 221:

¹²³ Լ. Խաչեռյան, Գրչության արվեստի լեզվական-քերականական տեսությունը միջնադարյան Հայաստանում, Երևան, 1962, էջ 230-251:

¹²⁴ Սիմեոն Զուղայեցի, էջ 143-146:

Հաջորդ հատվածը կոչվում է «Յաղագս ստուգաբանութեան»: Սրան երկու խնդիր է հատկացվում՝ թեքական ձևերի, այսինքն՝ հոլովովող ու խոնարհվող բառերի ուղղագրության բացահայտում և բառիմաստի վերծանում:

ա. «Ստուգաբանութիւն յաղագս հոլովմանց». «Արդ՝ զԴաւիթ անունն Դավթի պարտ է հոլովել և ոչ Դաւթայ, քանզի ինն իւր սեպհականէ: Եւ նմանապէս՝ փոքրիկ, փոքրկի, աղջիկ, աղջկի: Եւ նընդունելութեան հոլովան, օղն հոլովի ողի, որզան՝ մաքրող, մաքրողի: Նոյնպէս և բայն ըստ ներգործականին, եթէ հրամայական է, պարտ է լուսաւորեա՛ ասել, քան թէ լուսաւորեայ, որ սահմանական է: Եւ եթէ կրաւորական իցէ, լուսաւորիր պարտ է ասել: Եւ դարձեալ՝ եթէ ուղղական անուան վերջն Ին իցէ նեզական հոլովան, ի գործիականումն և բակառականումն միայն յեչ փոխարկի, հիգան՝ ոսկեաւ, զոսկեաւ, իսկ նայլսն ի Իիւն փոխարկի, որզոն՝ ոսկւոյ, զոսկւոյ: Իսկ ընյոքնականսն յամենայնում յեչ փոխարկի, հիբար՝ ոսկեաց, զոսկեաց: Սոյնպէս ի վերայ այլոց» (անդ): Այս տեսակը վկայված է նաև Սիմեոն Զուղայեցու քերականության մեջ, որը ստուգաբանության երեք եղանակ է ճանաչում՝ «ըստ ծանօթութեան, ըստ լծորդութեան և ըստ հոլովման»¹²⁵:

բ. «Ստուգաբանութիւն յաղագս բառի քերթութեան». այս տեսակի հիմքում Մովսէսի ստուգաբանական ուսմունքն է. «Իսկ ըստ քերթութեան՝ կամ ըստ ձայնին լինի կամ ըստ իրին, ըստ ձայնին՝ որպէս ճնճղուկ, ըստ իրին՝ որպէս սապատ» (անդ, 430բ):

«Սահման քերականութեան» երկի նշանակությունը, հատկապես բերած նորությունները գնահատելու համար կարևոր է նկատի առնել դրա ստեղծման ժամանակը: 17-րդ դարում նոր շրջանի քերականության առաջնեկը համարվում է Սիմեոն Զուղայեցու աշխատությունը, որը նախքան տպագրվելը, այսինքն՝ 1725 թվականը, ձեռագիր վիճակում կիրառության մեջ է եղել դեռևս 1637 թվականից. այս հանգամանքը որոշ հետազոտողների թույլ է տվել Զուղայեցու գործը ժամանակով առաջ դնել ավելի վաղ տպագրված քերականություններից (Կղեմես Գալանոս, Հովհաննես Հոլով Կոստանդնուպոլսեցի, Ոսկան Երևանցի)¹²⁶: «Սահման քերականութեան» երկի մեզ հասած հնագույն գրչագրերը գրվել են 1621 (ՄՄ 2018), 1624 (ՄՄ 2292) և 1634 (ՄՄ 1686) թվականներին, այսինքն՝ առնվազն ժամանակագրորեն կասկած չի հարուցում, որ այս քերականությունը նախորդում է Զուղայեցու ձեռագիր աշխատությանը, և նրանով է

¹²⁵ Նույն տեղում, էջ 151:

¹²⁶ Զ. Միրզոյան, Սիմեոն Զուղայեցի, Երևան, 1971, էջ 37-39, Զ. Մխիթարյան, «Սիմեոն վարդապետ Զուղայեցու մատենագրական և ֆեռականագիտական վաստակը», էջմիածին, է, 1968, էջ 35-44:

սկիզբ առել հայերենի հունալատինատիպ քերականությունը: Ըստ այդմ՝ հիմք ընդունելով այս ձեռագրերի վաղեմությունը՝ կարելի է ենթադրել, որ վերևում նշված նոր եզրերը կամ ձևակերպումները, որոնք կրկնվում են ժամանակի այլ քերականական աշխատություններում, յուրացված են «Սահման քերականութեան» գործից:

TIGRAN SIRUNYAN, TATEVIK MANUKYAN

**DEFINITIONS OF GRAMMAR: THE FIRST BRIEF GRAMMAR
OF THE GREEK-LATIN TYPE (17th century)¹²⁷**

Keywords: Brief grammar, manuscript, handbook of Greco-Latinizing type, Simeon Jughayets‘i, textbook, phonetics, parts of speech, Latinizing period.

An anonymous work entitled *Definitions of Grammar* is preserved in 24 manuscripts of Matenadaran: the oldest is from the 17th century, and latest was written in the 19th century.

The *Definitions of Grammar* is essentially a handbook of Greco-Latinizing type, with a traditional presentation of grammar on the basis of the *Grammar* by Dionysius Thrax and supplemented with novelties from the Latinizing grammars of Classical Armenian, mostly alien to Armenian. The main material of this work is purely grammatical and defined from letter to word, without any section on the syntax. At the end of the work, there is an appendix entitled "Instructions in Grammar" with some information on the punctuation and a few notes on spelling.

Simeon Jughayets‘i’s work which circulated in handwritten form since 1637 is regarded as the first grammar of the modern period. The oldest extant manuscripts of the *Definitions of Grammar* are dated 1621 (M 2018), 1624 (M 2292) and 1634 (M 1686). Hence, this *Grammar* precedes the handwritten work of Jughayets‘i and is the first Armenian grammar of Greco-Latinizing type. Thus, the new terms and formulas of this text occurring in other grammars of that time could be considered as borrowed from the *Definitions of Grammar*.

¹²⁷ This work has been supported by the RA MESCS Science Committee within the frame of the research project № 18T-6B200.

ТИГРАН СИРУНЯН, ТАТЕВИК МАНУКЯН

**"ОПРЕДЕЛЕНИЯ ГРАММАТИКИ" – ПЕРВАЯ КРАТКАЯ
ГРАММАТИКА ГРЕКО-ЛАТИНСКОГО ТИПА (XVII в.)¹²⁸**

Ключевые слова: Малая грамматика, рукопись, пособие греко-латинского типа, Симеон Джугаеци, учебник, фонетика, части речи, латинизирующий период.

Анонимное сочинение «Определения грамматики» дошло до нас в 24 рукописях Матенадарана: самая древняя относится к XVII в., а самая поздняя – к XIX в.

«Определения грамматики» – пособие греко-латинского типа: с традиционным представлением грамматики на основе армянского грецизированного перевода грамматики Дионисия Фракийского, с дополнениями из арсенала латинизирующих грамматик. Некоторые из использованных в нем форм, а также грамматических категорий – это чуждые классическому армянскому грецизмы и латинизмы. Основной материал трактата – чисто грамматический и представлен от буквы до слова. В нем нет раздела, посвященного синтаксису. В конце сочинения имеется дополнение: «Наставления по грамматике», содержащее сведения по пунктуации и некоторые замечания по правописанию.

Первенцем грамматики нового времени считается труд Симеона Джугаеци, которым в рукописном виде пользовались начиная с 1637 года. Древнейшие дошедшие до нас рукописи анонимного «*Определения грамматики*» написаны в 1621 (М 2018), 1624 (М 2292) и 1634 (М 1686) гг., то есть эта грамматика предшествует рукописному труду Джугаеци, являясь первым учебником армянской грамматики греко-латинского типа. Следовательно, использованные в ней новые термины или формулировки, если они повторяются в других грамматиках того времени, могли быть заимствованы из «*Определений грамматики*».

¹²⁸ Исследование выполнено при финансовой поддержке Комитета по науке МОНКС РА в рамках научного проекта № 18Т-6В200.